

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԱՌԻՍՏՈՎՍԿԻ

# ԼՃԱՅԻՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

ԹԱՐԴՄ. Մ. ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՀԱՆԷԶ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 6





Պատ. խմբ. Ա. Հ ա յ Ր Յ ա Ն  
Տեխ. խմբ. Գ. Զ ե Ն յ ա Ն  
Սրբագրիչ՝ Ա. Ա Ր զ ա Բ ա Ն յ ա Ն

Դրավիտ 2096, պատվեր 603,  
Հրատար. 3718, տիրաժ 4000  
Պետհրատի տպարան  
Յերևան, II Գնունի, 4

Հանձնված և արտադրություն 23 ապրիլի 1936 թ.  
Ստորագրված և տպելու 26 մայիսի 1936 թ.

ԳԻՆԸ 1 ՌՌԻՐ.

1-352691  
КОНСТАНТИН ПАУСТОВСКИЙ  
ОЗЕРНЫЙ ФРОНТ  
ГИЗ ССР Армении, Эривань

Բարակ Սվերդլովից, գոչուն ծովերից  
Հանրապետությունը մտավ մեր դռներից:  
Ալեքսանդր Պրոկոֆյեվ

Կապիտան Տրեները ծամեց տապալած  
շաղգամը և հառաչեց: Շաղգամի համը դառնա-  
վուն էր, վորպես ողբ անտառոտ և ցուրտ Զա-  
ռնեժիայի, վորտեղ կանգնած էր նավատորմիղը:  
Մայիսը վերջանում էր: Կեղտոտ սառույցը դեռևս  
հալվում էր Ռնեգա լճի ափերին: Գիշերը թվում  
էր, թե լիճը ծով է դառնում — սառույցի հոտը  
հիշեցնում էր ծովափնյա խոնավ ավազի հոտը:  
Խրճիթի լուսամուտներից լսվում էր անտառի  
քնարեր աղմուկը: Շողշողուն լույսերով հրետա-  
նավակները գլուխ ելին տալիս ափին: Սրանք  
հին բուքսիրային նավեր ելին, վոր նման ելին  
տափալ վալատիլներին: Պետրոգավոդսկում նրանց



ներկեցին թաց քաթանի գուլնի և տախտակա-  
մածին դրին գեղաշար թնդանոթներ:

— Ինչի՞ լես հառաչում, ծերուկ,— հարցրեց  
Տրեներին ղեկապետ Յերչենկոն, վորին «Սար-  
վինգ» ելին կոչում:

Ծովային լեզվով «սարվինգ» կնշանակի՝ հին,  
փտած պարուսին: Յեկան դաժան որեր: Լավա-  
գուլն խմիչքը համարվում եր անգուլն թելը,  
և հրաշալի կերակուրը՝ նեխած ալյուրի շփոթը:  
Հաստ ղեկապետը զրկվել եր իր ծավալից և  
գորշ գուլն եր ստացել՝ շատ բան տեսած ձկնոր-  
սական առագաստի նման: «Սարվինգ» անունը  
նրան տվեց Տրեները: Ոնեգայի լճային նավա-  
տորմիդն որինականացրեց այդ մականունը:

— Ձազրելի լես, — պատասխանեց Տրեները:  
— Նստի՛ր այս փոսում և սպասի՛ր անգլիական կոր-  
ծանիչներին: Շաղգամ ծամի՛ր և հիացի՛ր «պահա-  
ծոյի տուփերով», — նա գլխով արավ դեպի դուրս,  
վորտեղ հրետանավակների լույսերը շարունակում  
ելին որորվել ճոճանակի միորինակութամբ:  
— Բացի դրանից ել ցուրտ ե: Գալիս ե չերկրորդ  
սառցային շրջանը:

Կոմիսար Մարտայեննը բացասաբար քմծիծաղ  
տվեց:

Խրճիթի տանտիրուհին, պառավ Կուզմի-  
նիշնան, սեղանին դրեց մի ափսե լեփած ձրկ-  
նապուր: Տրեները պատառաքաղով խառնեց հո-  
տած ձկնապուրը և բարկացավ:

— Ի՞նչ եք թոնթորում: Պետք ե վերջապես  
սովորենք հարգել գիտությունը: Նավատորմիդը  
սեփական կաշվի վրա զգում ե սառույցների մո-  
տենալը:

Սարվինգի աթոռ ճռուց:

Տրեները բարկացած նայեց ղեկապետին:

— Մի փքվի, Նդուարդ, — կերկերալով ասաց  
Սարվինգը. — լես միշտ քեզ բավականությամբ  
եմ լսում:

— Ուսերի վրա գլուխ պետք ե ունենալ, —  
ասաց Տրեները: — Ինչո՞ւ անգլիացիները բազա  
լեն սարքել Մեգվեժի սարում: Ինչո՞ւ լեն ա-  
փին դրել նավային թնդանոթներ և լիճն են  
իջեցրել կործանիչները: Յեթե մայիսին, մայի-  
սի կեսին սառույց չլիներ, այդ կլինե՞ր, թե՛ չե:  
Քեզ եմ հարցնում, անտաշ ծերուկ: Իհարկե չե:  
Մեր սարդինկայի արկղիկները չելին կարողա-  
նում հաղթահարել սառույցը: Մենք վաղում ե-  
լինք լեզրի սառույցի մոտով և կրծում սեփական  
բռունցքները: Մայիսը, հրաշալի ամիս մայիսը,



կանգնած եր այս սատանայի լճի վրա, և սառուցը հալվում եր նույն արագությամբ, ինչ արագությամբ բուսնում ե տորմիդի պետի միրուքը:

(Հայտնի լեր, վոր տորմիդի պետը սափըրվում եր շաբաթը մի անգամ, վոչ թե ժամանակ չունենալու պատճառով, այլ վորովհետև վոչ մի կարիք չկար այդ հաճախ անելու):

— Յուրա գարուն ե, — համաձայնվեց Մարտայնենը:

— Տո՛ւրա գարուն ե, — կծու կերպով հարցրեց Տրեները: — Դուք համոզված եք դրանում: Բայց դուք գիտե՞ք, վոր նախապատմական ժամանակներում այստեղ Սիցիլիայի կլիման ե լեղեր: Այստեղ ծաղկում եր կղզին, (մագնոլիան), թանկագին ընկեր Մարտայնեն, կղբի և նարինջ:

— Ամեն ինչ կարող ե լինել, — համաձայնվեց Մարտայնենը: Նրա քունը տանում եր: Սարվինգն արդեն խռմվում եր:

— Այո, ամեն ինչ կարող ե լինել, — պատասխանեց Տրեները, և հետ նայեց:

Խրճիթի մութ անկյունից, վորտեղ դրված եր մահճակալը, մեղմ լացի ձայն լսվեց:

Մարտայնենը՝ ներքևի շրթունքը կծած, դուրս եր նայում լուսամուտից, վորտեղ սոճիների ա-

րանքին դողդողում եյին աստղերը: Սարվինգն արթնացավ և կանգնեց:

— Դարձյա՛լ, — ասաց նա վախեցած և սկսեց կոճկել պատառոտված շինելը, վոր հիվանդանոցային խալաթի լեր նման: — Ժամանակ ե հրետանավակը գնալու: Ժամի հինգին դետքի լենք դուրս գալիս դեպի Մեգոսարով: Գոնե լերեք ժամ մարդ ջնեք:

— Մեռածին չես վերադարձնի — փնփնթաց Մարտայնենը: — Գնանք, դեկապետ:

Տրեները մնաց: Դեռ նախանցյալ ուրը մտավ կուզմինիշնայի խրճիթը կաթի: Խրճիթում նա հանդիպեց պառավին և մի ջահել լացող կնոջ: Մինչդեռ պառավը Տրեներին մածնով կերակրում եր, կինը լաց լինելուց չեր դադարում:

Տրեներն շտապ կլանում եր մածունը՝ առանց նրա համն զգալու, հետո կամաց հարցրեց պառավին՝ ո՞վ ե այդ կինը:

— Վարժուհի լե, — շշնջաց պառավը, — նրան դժբախտություն ե պատահել: Աղջկանը սպանել են:

Տրեներն այլևս վոչինչ չհարցրեց: Իրեն մոտ, № 2 հրետանավակի վրա նա պատմեց արտասովոր խրճիթի մասին, վորտեղ կերակրում են թանձր



կանգնած եր այս սատանայի լճի վրա, և սառուցը հալվում եր նույն արագությամբ, ինչ արագությամբ բռնանում ե տորմիդի պետի միրուքը:

(Հայտնի չե՞ր, վոր տորմիդի պետը սափրը-վում եր շաքաթը մի անգամ, վոչ թե ժամանակ չունենալու պատճառով, այլ վորովհետև վոչ մի կարիք չկար այդ հաճախ անելու):

— Յուրտ գարուն ե, — համաձայնվեց Մարտայնենը:

— Յուրտ գարուն ե, — կծու կերպով հարցրեց Տրեները: — Դուք համոզված եք դրանում: Բայց դուք գիտե՞ք, վոր նախապատմական ժամանակներում այստեղ Սիցիլիայի կլիման ե չեղել: Այստեղ ծաղկում եր կղբին, (մագնոլիան), թանկագին ընկեր Մարտայնեն, կղբի և նարինջ:

— Ամեն ինչ կարող ե լինել, — համաձայնվեց Մարտայնենը: Նրա քունը տանում եր: Սարվինգն արդեն խռմփում եր:

— Այո, ամեն ինչ կարող ե լինել, — պատասխանեց Տրեները, և հետ նայեց:

Խրճիթի մութ անկյունից, վորտեղ դրված եր մահճակալը, մեղմ լացի ձայն լսվեց:

Մարտայնենը՝ ներքևի շրթունքը կծած, դուրս եր նայում լուսամուտից, վորտեղ սոճիների ա-

րանքին դողդողում եյին աստղերը: Սարվինգն արթնացավ և կանգնեց:

— Դարձյա՛լ, — ասաց նա վախեցած և սկսեց կոճկել պատառոտված շինելը, վոր հիվանդանոցային խալաթի լեւ նման: — Ժամանակ ե հրետանավակը գնալու: Ժամի հինգին դետքի յենք դուրս գալիս դեպի Մեզոստրով: Դո՛նե յերեք ժամ մարդ քնե՛ր:

— Մեռածին չես վերադարձնի — փնփնթաց Մարտայնենը: — Գնանք, դեկապետ:

Տրեները մնաց: Դեռ նախանցյալ ուրը մտավ կուզմինիշնայի խրճիթը կաթի: Խրճիթում նա հանդիպեց պառավին և մի ջահել լացող կնոջ: Մինչդեռ պառավը Տրեներին մածնով կերակրում եր, կինը լաց լինելուց չե՛ր դադարում:

Տրեներն շտապ կլանում եր մածունը՝ առանց նրա համն զգալու, հետո կամաց հարցրեց պառավին՝ ո՞վ ե այդ կինը:

— Վարժուհի չե, — շշնջաց պառավը, — նրան դժբախտություն ե պատահել: Աղջկանը սպանել են:

Տրեներն այլևս վոչինչ չհարցրեց: Իրեն մոտ, № 2 հրետանավակի վրա նա պատմեց արտասովոր խրճիթի մասին, վորտեղ կերակրում են թանձր



մածնով: Դեպի խրճիթը ուխտագնացություն  
սկսվեց:

Պառավը վրդովված էր ձևանում, բայց մա-  
ծունը չէր մերժում:

Յերբ մածունը վերջանում էր, Կոզմինիշնան  
նավորգներին կերակրում էր տապակած շաղ-  
գամով և ձկնապուրով:

Խրճիթն անվանեցին «կաֆե Կալուչնի»:  
Ամեն իրիկուն այնտեղ կարելի չէր հանդիպել  
այցելուների, վորոնք հեռավոր կերպով նավորգ-  
ներ ելին հիշեցնում: Նրանց պրոֆեսիայի մա-  
սին կարելի չէր կռահել պատահաբար անջնաս  
մնացած նշաններից՝ վոսկեղոծ «կրաքներով» գըլ-  
խարկներից, պատառոտված փեշերից, խարխա-  
լներով կոճակներից, բամբակի զգեստի թևերի  
կտածվածքից և հնաձև պիջակներից, բայց ա-  
վելի՝ քամահարված և սառած դեմքերից:

Մարվինգը և Մարտայնենը գնացին: Տրենե-  
րը մնաց: Նա հետաքրքրվող էր: Այրող հետքը-  
քըրությունը շարունակ հետապնդում էր նրան:  
Զնայած քառասուն տարեկան էր, նա շատ բա-  
նով էր հրապուրվում: Նա նման էր լերեխայի,  
վորն աշխատում է՝ ինչ էլ լինի, կոտրել խա-  
ղալիքը, վորպեսզի տեսնի ներսը: Տրեների հա-

մար կյանքն այդ խաղալիքի նման էր: Նա սի-  
րում էր քանդել մեխանիզմներ, բանահարցել  
մարդկանց, կարդալ գիտական հետազոտություն-  
ներ, վիճել: Յերկար տարիների ընթացքում կու-  
տակած գիտողություններից շմեցուցիչ լեզրա-  
կացություններ էր անում: Այդ զբաղմունքը  
նրան ուրախացնում էր: Դրանից էր, զուցե,  
վոր Տրեներն ամբողջ կյանքն անց էր կացրել  
հեշտ և անհոգ, կարծես սուլելով և վաստակել  
էր ყудак անունը:

Ուսուցչուհին Տրեներին հանգիստ չէր տա-  
լիս: Նա ուզում էր իմանալ նրա արցունքների  
պատճառը: Այս անգամ նա ամենից քիչ հետա-  
քըրքրությամբ էր դեկավարվում: Նա զգում էր՝  
իրեն վոչ հատուկ, անախորժ կարեկցություն:

—Այդ ինչպես պատահեց — հարցրեց նա կուզ-  
մինիշնային:

Պառավի պատմությունը Տրեներին չհանգըս-  
տացրեց: Ճիշտն ասած՝ նա վոչինչ չհասկացավ:  
Պարզ էր մի բան — ուսուցչուհու լերկու տարե-  
կան աղջիկը մեռել էր ձեռնամուխի պայթումից:

Անհրաժեշտ է հիշատակել: Կռիվը տեղի ուներ  
1919 թվին Տուվուլ գյուղում: Զառնեժի թերա-  
կոզու վրա: Հյուսիսից Պետրոգավոգսկի վրա ար-



շավում ելին յերկու սպիտակ բանակներ: Ուրեցցկի կամավորական բանակը՝ կազմված ֆիններէից, խր-  
փում-անցնում եր ֆինլանդիայից դեպի Լոդէնի դաշտը: Հյուսիսային կամավորականը — Թանձր խառնուրդ անգլիական, սերբական, ամերիկական և ռուսական սպիտակ ջոկատներէից — շարժվում եր Մուրմանսկից յերկաթգծի յերկարությամբ: Վերջին բանակը կոչում ելին «անգլիացիներ»:

1919 թվի մայիսին անգլիացիները գրավեցին Մեդվեժից սարը՝ Ուեգա լճի ամենահյուսիսային կետը: Նրանք այստեղ ամրացան և Զաոնեժե ուղարկեցին ջոկատներ պարենով և զենքով՝ ապստամբութիւն բարձրացնելու զառնեժեցի գործատեր ձկնորսների մէջ:

Ապստամբութիւնն սկսվեց Տուվուլում և Շուլնգում, բայց արագութեամբ ճնշվեց:

Սարվինգն իր հրետանավակով Պետրոգա-  
վոդսկից Տուվուլ հասցրեց յերաժշտական խումբը: Այս բաժնական եր, վոր ապստամբները սպիտակ դրոշակ բարձրացնելին և անձնատուր լինելին:

Այդ ժամանակ Կարելյան ռազմաճակատում գործ և հրացան չկար: Ամեն մի զինված տասը մարդը լավ մարտական զորամաս եր համարվում: Բավական ե, վոր միակ գումարտակն ամբողջ

ամիս պահում եր սպիտակների գերազանց ու-  
ժերի բուռն գրոհը Մուրմանի ճանապարհի յեր-  
կայնութեամբ, կատաղի կերպով պաշտպանելով  
ամեն մի կոճ և ամեն մի հեռագրասլուս: Վերջի  
վերջո այդ գզգզված և քաղցած գումարտակը  
կանգնեցրեց սպիտակների առաջխաղացումը:

Բոլոր գլխավոր ուժերը քաշված ելին Յու-  
զենիչի դեմ:

Սարվինգն իրավացի կերպով հպարտանում  
եր «Տուվուլյան կռիվով»: Թմբկահարները և փող-  
հարները, վորոնք կարողանում ելին մի կերպ  
«Խնտերնացիոնալ» նվագել, հուսալի մարտիկներ  
դուրս յեկան:

Սրանից հետո, իսկապես, Սարվինգին յեր-  
կար ժամանակ հանգիստ չելին տալիս: Ամեն  
անգամ, յերբ նրա «Մուղիկանտ» անունով հրե-  
տանավակը, անիմները շտապացնելով, ներս եր  
սողում Պետրոգավոդսկի նավահանգիստը, կա-  
տերների պահապան զորախմբերը նրան դիմա-  
վորում ելին շոնդալից քալերգով: Յեռանդով  
նվագում ելին սանրերով, թիթեղի գավաթնե-  
րով, կամ պարզապես բուռնցքներով հարվածում  
ելին փքած թշերին:

Նավատորմի ի հրամանատարն այս զվարճու-



Թխանը մատները արանքով եր նայում: Սարվին-  
դը կարմրատակում և հայհոյում եր:

Ուսուցչուհուն դժբախտությունը պատահեց  
յերաժշտական խմբի ափ հանելու որը:

Սարվինդը անակնկալ կերպով կրակ բաց  
արավ գլուղի վրա նավախելի հրանոթից:

Խուճապ սկսվեց: Մի քանի ամերիկական զին-  
վորներից բաղկացած զորախումբը, լեյտենանտ  
Շերվուդի հրամանատարությամբ, փախավ ան-  
տառները՝ չարձակելով վոչ մի գնդակ:

Շերվուդն առջևից եր վազում: Նեղ նրբա-  
փողոցում նա հանդիպեց ուսուցչուհուն: Նա աղջ-  
կա հետ աճապարում եր դեպի միակ քարե ամ-  
բարը՝ հրաձգությունից թաղնվելու համար: Շեր-  
վուդն ուսով դիպավ ուսուցչուհուն և հետ թռավ:  
Լսվեց պայթյուն: Շերվուդն առաջ նետվեց: Զին-  
վորները վազում էին նրա հետևից: Նրանցից  
մեկը թռավ ընկած աղջկա վրայից, կանգ ա-  
ռավ, ցույց տվեց իր գլուխը, ինչ վոր կատա-  
ղած բղավեց անգլերեն և առաջ վազեց:

Աղջիկն սպանվել եր քունքին դիպած նռնա-  
կի կտորով: Ինչպես յերևում ե, Շերվուդն ու-  
սուցչուհուն չի պահել, վայր եր գցել նռնակը:  
— Անհասկանալի չե, — փնթփնթաց Տրենները, —

վորպեսզի նռնակը պայթի, անհրաժեշտ ե աե-  
ղահան անել ողը, իսկ դրա համար պետք ե  
կանգ առնել: Այստեղ ինչ վոր բանն ուրիշ ե:

Ուսուցչուհին մեռածին գրկեց և գնաց ան-  
տառ: Նա մինչև առավոտ ման եր գալիս, որոր եր  
ասում կապտած աղջկան, և նրա համար յերգում  
եր նապաստակների մասին:

Առավոտյան ազդանշանորդ նավաստի Ֆյո-  
դոր Գուշչինը ուսուցչուհուն բերեց գլուղ: Ահա  
բոլորը, ինչ կարողացավ իմանալ Տրենները:

Տրեններն աչքերին քաշեց տարագավոր կեպ-  
կան և գնաց հրետանավակը: Մառախլապատ  
լճում ծփում էին մանր ալիքները: Նրանց վե-  
րևից, տաք ողի մեջ, վոր հերքում եր Տրեննե-  
րի յերկյուղը սառույցների արշավանքի մասին,  
բարձրանում եր ուռած լուսինը:

Տրենները խոժոռվեց: Լուսնյակ գիշերները նա  
անհանգիստ եր քնում: Կնշանակի՝ նորից անքնու-  
թյուն:

Ուսուցչուհին հիշեցրեց նրա ջանքերը, յերբ  
ծովալին լենթասպա յեր և գնում եր Պսկով՝  
ծննդավայրը: Այն ժամանակ նրա ձայնը թարմ  
եր: Ամեն յերեկո նա նավակով դուրս եր գալիս  
Վելիկայա գետը, կանգ եր առնում կամուրջի  
տակ և յերգում եր: Կամուրջն արձագանք եր



տալիս: Տրեհները չերգում եր հին ռոմանս: Այժմ նա մոռացել է, հիշողության մեջ միայն մի տողն է մնացել:

Ո՞վ ես, չերգչուհի, չես չգիտեմ...

Տրեհների շուրջը խմբվում ելին նավակներ: Նա միտն եր պահել մեկը՝ ներկած սպիտակ գույնի մի նավակ: Նրանով գալիս եր մի աղջիկ, զարմանալի նման այս ուսուցչուհուն — նույն կանաչավուն, մի քիչ շիւ աչքերը, նույն ամոթխած հայացքը: Նույն համակրելի տգեղ աղջիկը:

«Այ՛ցահեղութուն, — անցավ Տրեհների մտքով: — Յերգեցողութուն մինչև լուսաբաց, Վելիկայա գետի սառը ջուրը, ծաղկող լորենիների բուրմունքը...»:

Իր նավասենյակում նա կամաց չերգեց, «Ո՞վ ես, չերգչուհի, չես չգիտեմ», բայց ականջ դրեց և կտրեց: Ռադիոն սկսեց բարկացած չխչխկալ: Մի քանի րոպեից հետո ռադիոհեռագրիչը բերեց կապույտ բլանկ — հրամանատարի ծածկագրած հրամանը՝ անմիջապես շարժվել և Ռնեգա լճից գնալ Լադոգայի լիճը, դեպի Սվիրիցա նավակայանը:

Տրեհներն ասաց ինքն իրեն «գնալ Սվիրիցա»: Նա այն ժամանակ չգիտեր, վոր ներկա չէ վիդլիցի խիզախ և փալուն գործողության:

Յերեք որում նավատորմիդն անցավ մի քանի հարյուր մղոն Ռնեգա լճից Լադոգա, և խաբիսի գցեց Սվիրիցայում, Սվիրի՝ Լադոգա լիճը թափվելու մոտ:

Ճանապարհն անցան խորին գաղտնիքով: Պատրաստվում եր արագ հարված ֆինների թիկունքից — հարված՝ Վիդլիցային՝ կամավորական բանակի Ուրնեցկի գլխավոր բազային:

Ֆինները վոչինչ չեին կասկածում: Լադոգա լճում խորհրդային նավեր չկային: Նրանց արագ տեղափոխումը Ռնեգա լճից անհավանական եր համարվում: Ռազմագիտական որենքներով այդ հավասար եր խելացնորության, վորովհետև անգլիացիների դիմացի ռազմաճակատը մերկանում եր: Դրա հետ միասին, Պետրոգավոդսկի լրագրիչը տպագրում եր հանգստացուցիչ հաղորդագրություններ, վոր Ռնեգա լճի նավատորմիդը մինչև վերջին հնարավորութունը կաշտապանի քաղաքն անգլիացիներից, և բնակիչները կարող են հանդիստ զբաղվել իրենց գործով: Ֆիննական լրտեսները լրագրի համարները հասցնում ելին Ուրնեցկի բանակի շտաբը, վորտեղ բոլշևիկյան թերթին հավատում ելին անսպասման, և միամըտորեն:



Սվիրիցայում Տերենները բարձրացավ կամբրջակին: Շուրջը սառը մարգագետիններ ելին: Առափնյա մանր ուռիների մեջ աղմկում էր Հադոգայի քամին: Լաքած գորշ սառցակոշտերի նման, ջրի վրա կանգ ելին առել Բալթիկ ծովից լեկած «Ուսսուրիցեց» և «Ամուրեց» նավալըմբային ականանավերը:

Ականանավերի պղնձե բանակներն այնքան ելին փայլուն, վոր ծովագնացները «սատանայի աչք» անունն ելին տալիս: Վերջալույսը ցրել էր պղնձի վրա տասնյակ մանր մուլաւորեկներ: Ցածր լեռկինքը ծխում էր գետի վրա: Ամպերի մեջ արեւը արյունաշաղախ ձեղք բաց արավ:

Մարտայները կամբջակ բերեց նավատորմիղի հրամանատար Պանցերժանսկու հրամանը: Նա տրված էր բանբեր նավից, վորտեղ հրամանատարը պահում էր իր դրոշակը:

Տրենները հրամանը կարդում էր անթագցընելի բավականութամբ: Նա սիրում էր հրամանների լեզուն՝ կտրուկ, վորպես ելեկտրական ազդանշանների փայլը, վորոնցով միմյանց կանչում են մարտական նավերը գիշերափն արշավանքների ժամանակ:

— «Ընդհանուր խնդիրն է, — կարդում էր Տրենները, — տապալել թշնամու մարտկոցները Վիդլիցի արվարձանի մոտ և դեսանտ հանել գետաբերանում:

Նավերը հավաքվում են Սվիրիցայում: Իմ ազդանշանով բոլորը խաբիսիւր հանում են և շարքի մեջ են մտնում նավահետքով: Վիդլիցում մոտենում են ափին՝ գետից դեպի հյուսիս և սկսում են նրա աջ ափի մարտկոցների գնդակոծումը, աշխատելով շաղել մարտկոցները և ունենալ նրանց հյուսիս արևելք իրենից: Այնուհետև ականանավերը կրակը դարձնում են Վիդլիցի արվարձանին: «Յաուզա» խափանիչը գընդակոծում է գետից դեպի հարավ գտնվող մարտկոցները և կրակը դադարեցնում է վոչ շուտ, քան մարտկոցների լռելը:

Պահականավերի դիվիզիոնն իրեն պիտի պահի խափանիչ «Յաուզայից» արևմուտք և վերջինի ազդանշանով գնա գետաբերանը: Գետաբերանին մոտենալով՝ կրակ բանա և կանգ առնի նավամատուցում»:

— Այս մեղ, — ասաց Տրենները: — Աղմկալից կլինի:





«Փոխադրանավերից զորք ափ իջեցնելուց հետո, ամեն մի հրետանային հրաձգություն դադարում ե: Նավերը մնում են իրենց տեղերում և սպասում են իմ կարգադրության:

Սկանանավերն ունեն յեռադրոշի ազդանշանի գիրք: Շոգենավերի համար կապի միջոցը — միայն ձայնը»:

— Վերջացավ, — հարցրեց Մարտայնենը:

— Վերջացավ, — պատասխանեց Տրեները և կրկնեց.

— «Շոգենավերի համար կապի միջոցը՝ միայն ձայնը»:

— Ճիշտն ասած, հենց ձայնով ել կոչում ենք: Յեւ ի միջի ալոց, ջարդում ենք: Ոնեգա լճում, Մեզ կղզու մոտ — այդ ձեղնից առաջ եր—ջեկան անգլիական հիդրոտղանավեր: Ոգաչուները գլադայություն եյին անում, համարյա կաշում ելին կայներին: Իսկ մենք վոչ մի զենիթալին հրանոթ չունեցինք: Գնդացիները՝ ժապավենի շեղության պատճառով, վերև չեն խփում: Հարկադրված եյինք պաշտպանվել հրացանաձգությամբ, և սպառնալ բռունցքներով: Բայց դրա փոխարեն մենք իդեալական կերպով վարժվել եյինք ծրվվել մեր «պահածոյի տուփերով»: Անգլիացիները վոչ մի անգամ չկարողացան զիպցնել:

— Պատահում ե, — ասաց Մարտայնենը:

Կոմիսարը պատկանում եր աչքերով խոսող մարդկանց տեսակին: Նա մինչև անգամ «այո» կամ «վոչ» սակավ եր արտասանում: Համաձայնությունը կամ մերժումը Տրեները սովորաբար խմանում եր նրա հայացքից:

Տրեներին նա նայում եր հավանողաբար, ամբողջովին նրան վստահում եր, իսկ Պետրոզրադից նոր ուղարկված ափագ հրետավորին նայում եր տաղտկությամբ և համարում եր անմիտաթեթեւսոլիկ:

Մարտայնենը յերբեք չեր հագոյում. այն դեպքերում, յերբ հարկավոր եր լինում ծանր խոսք ասել՝ նրա ծոծրակը շիկնում եր և աչքերը սպիտակում ելին:

Լիճ դուրս գալը նշանակված եր գիշերը: Տրեները հրամայեց զարթեցնել իրեն կես գիշերին և իջավ նավասենյակ: Նա պռոկեց և ծածկելուց շինելով:

— Ճակատամարտերը — այդ ծուխ ե, — փրնթփրնթաց նա նիրհի միջից: — Այս ով ասաց: Ի՞նչ անհեթեթություն: Յերևի անգլիական զորապետներից մեկը: Անգլիական հնավանդ սովորությամբ, ամեն մի մարտական գններալ մեռնելիս՝



վորեն հիմարութլուն եր ասում, որինակ՝ պատերազմը, ինչպես և բոլոր յերեվուլթներն աշխարհում, անհրաժեշտ է:

«Անգլիան հույս ունի, վոր ամեն վոք կկատարի իր պարտականութլունը» — այս Նելսոնի արտահայտութլուններից ամենաանհաջողն է:

Ի դեպ, ինչո՞ւ Նելսոնը տարավ Տրաֆալգարի ճակատամարտը: Առաջաստավոր գծանավերի շարժի մեջ կանոնավոր հաշիվ չկար: Նելսոնին ղեկավարում եր կամակորութլունը, ֆանտազիայի թռիչքը, խելակորույս խրդախութլունը:

Մեզ մոտ այլ է: Մենք կհաղթենք շնորհիվ պարզ պլանի, վոր ամրապնդված է արիութլամբ և հավատով դեպի գործը:

— Տրաֆալգար, — արտասանեց Տրեները և շինելը քաշեց գլխին:

Տրեների նիրհն ընդհատեց դռան կարճ թրխկոցը: Յեկավ Մարտայնենը: Նա նստեց Տրեների վոտքերի մոտ, պապիրոս փաթաթեց և իբր թե պատահմամբ դուրս թոցրեց:

— Հրետավորը յերեւում է:

— Յես ստուգել եմ հեռաչափերը և ամրակապերը: Ամեն ինչ կարգին է:

— Հա, բայց մարդը կարգին չէ:

— Կհսկենք, — Տրեները խոժոռվեց և նստեց թախթին:

Գլուխը ցավում եր: Մարտից առաջ այդ բոլորովին անտեղի յեր:

— Իսկ յես այստեղ պառկած մոռածում ելի:

— Ցնորքներ Պետրոգրադի կղբիների մասին, — քմծիծաղ տվեց Մարտայնենը:

— Այո, շարունակ նույն ցնորքները կղբիների մասին, — հառաչեց Տրեները:

Հրետավորը նրան անհանգստացնում եր: Փոքրիկ, սև, շատ քաղաքավարի, գունատ դեմքը ու բազմաթիվ պզուկներն այտերի վրա՝ մատնում ելին նրա ցամաքային ծագումը: Կռիվներում նա դեռ չէր յեղել:

Հրետավորն ինքն եր խուզում իր բեխերն անգլիական ձևով: Նրա հավասնյակում ֆիլդզերմինի և վարսավիրանոցի հոտ եր գալիս: Պատերի վրա հովհարած և կախ ելին տված վարդագույն քթերով և կաղամբագույն աչքերով՝ վոսկեծամ աղջիկների բացիկներ: Նավաստիների հետ հրետավորը խոսում եր շողոքորթութլամբ, բայց քիչ: Զորախումբը նրան չսիրեց և անվանեց նրան «ճանապարհորդ»:



—Նա ուղուհը պիտի ասեղնագործի և վոշ  
թե լողա,— փնթփնթաց Տրենները և վրան առավ  
շինելը: Ժամանակ եր կամըշակ բարձրանալու:

—Ի՞նչ ե կատարվում նրա հետ:

—Նա դողում ե,— պատասխանեց Մարտայնե-  
նը, և նրա ծոծրակը շիկնեց:

Տրենները տնքաց, հայնոյեց և կոճկեց շինելը:  
Հանկարծ նրա դեմքն զգաստացավ, աչքերը սա-  
ռան: Նա ձեռքը տարավ գրպանը և հանեց կաշվե  
հին ձեռնոցները: Մարտայնենին թվաց, վոր այդ  
չնչին շարժումով, Տրեններն անփուլթ կերպով  
պահեց գրպանում քիչ առաջվա ցնորքները կըզ-  
բիների մասին: Տրեններն ասաց խստորեն:

—Իսկույն շարժվում ենք:

—Այո,— ահամա պատասխանեց Մարտայնենը,  
և առաջ թողեց Տրեններին: Լադոգայից փչող  
քամին նորից համարում եր նավատորմիդի նոսր  
ճրագները: Դղրգացող գոլորշին վեր եր թռչում  
աղանանավերի խողովակներից: Ներհից հետո,  
հյուսիսային գունատ յերկինքը Տրեններին յերազ  
թվաց: Դեռի ալիքներն աղմկում ելին առափնյա  
թփերի մեջ: Ճահիճների վրա ճռնչում ելին ջրա-  
հավերը:

Այդ ըոպելին հին բուքսիրի շոգենավ «Սիլ-  
նին» — այժմ № 2 հրետանային նավակ — Տրե-

ներին թվաց անեղ կործանիչ: Նավը լռեց: Մար-  
դիկ փափսոցով ելին խոսում: Միայն մեքենան,  
տաքանալով սուլում եր գոլորշի արձակելով: Բան-  
բեր նավի վրա թարթեց ազդանշանը: Բոլորը  
ցնցվեցին, թեև նրան սպասում ելին հենց  
ես ժամին: Ազդանշանը արվեց նշանակած ժա-  
մին:

Անմիջապես յերկու աղանանավի ցածր ստվեր-  
ներ շարժվեցին և հեալով կաթսաներով, զնա-  
ցին բանքեր նավի հետևից: Նավատորմիդը ձգվում  
եր նավահեռքային կրակների սպիտակ գծով:

Դուրս յեկան լիճը: Քամին պաղում եր: Արև-  
մուտքից գալիս եր կարճ ալիք: Մի ժամից հե-  
տո, № 2 հրետանային նավակը, ալիքն ընդունե-  
լով, առաջ եր խաղում: Տրենները լսում եր աճող  
աղմուկը և չեր կարողանում բաժանվել այն մըտ  
քից, վոր աղմկում են վոշ թե առափնյա սոճի  
անտառները, ալ Լադոգայի լիճը:

Վիզլիցի ճանապարհին, Ուոնկա գետի գե-  
տաբերանի մոտ, նավատորմիդին սպասում ելին  
զեսանտով փոխադրանավերը: Նրանց մոտեցան  
զիշերվա ժամի յերեքին: Արևելքում ծնվում եր  
արշալույսը՝ անվերջ ճահիճների փայլով: Քամին  
հանդարտվեց:



Կատարյալ լուսթյան մեջ նավատորմիդը շա-  
րափոխվեց: Պահականավերն ողակով շրջապա-  
տեցին փոխադրանավերին: Ֆիննական մարտկո-  
ցը՝ կարծես քնաթափախ՝ կրակ բաց արեց: Արկերն  
ընկնում ելին նավատորմիդի նավերի և ափի  
միջև: Հրամանատարը հրամայեց ֆինների կրա-  
կին չպատասխանել:

Տրեները հաշվում եր չհասնող արկերը և նա-  
յում հրետավորին:

Հրետավորը շփում եր ձեռքերը:

— Մըսնւմ եք: Առաջուց . պիտի քնից կշտա-  
նայիք, — կոպտորեն ասաց Տրեները, — սարսու-  
ռից ստամոքսի խանգարում կարող ե առաջանալ:  
Հրետավորը սեպցավ և իջավ կամրջակից:

Ժամի հինգին նավատորմիդը մոտեցավ Վիդ-  
լիցին: Ափերին տիրում եր նախալուսաբացի խա-  
ղաղություն: Ականջ դնողին լսելի կթվար արթ-  
նացող թռչունների շփոցը: Մռռախուղ եր և  
խոնավ:

Ականառավերը բաժանվեցին նավատորմիդից,  
գնացին հյուսիս, հանկարծ շուռ չեկան և խկուլն  
լերկու գոռացող համազարկ, վոր կրկնվեց արձա-  
գանքով, փալկեցին գորշ ջրի վրա:

Համազարկերը հաճախակի ելին դառնում: Ճա-

կատամարտի ծուխը — սրտ մասին քիչ առաջ հի-  
շեց Տրեները — սրորվում եր տախտակամածնե-  
րի վրա, պալթելով կրակի հնչուն տրաքոցով:

«Յառկա» խափանավը կրակ բաց արեց Վիդ-  
լիցի գործարանի վրա: Գործարանը բռնկվեց հրս-  
կայական խարուկով: Ֆինները պատասխանում  
եյին շտապ և կատաղաբար: Ճալերը մարտից շըշ-  
մած, ճչալով սլանում եյին դեպի հարավ:

Ափերը խուլ դողդողում եյին: Ծուխը գա-  
լարվելով վեր եր բարձրանում անտառի վրա,  
մերթ սպիտակ, մերթ բոսորային քուլաներով:  
«Յառկան» անողոք մենամարտ եր վարում հա-  
րավային ափի մարտկոցի հետ: Տրեները նայեց  
ժամացույցին, արդեն վեցն եր: Կռիվը տևում  
եր ուղիղ մի ժամ:

Բարձրացնելով աչքերը ժամացույցից, Տրե-  
ները տեսավ, ինչպես հրետավորը կորացավ թըն-  
դանոթի մոտ: Տրեներն ապշած նայում եր նը-  
րան, յերևում ելին փալլուն աչքերը թուխ  
գեմքի վրա, «ուղղակի Լերմոնտովն ե», անցավ  
Տրեների մաքով:

Հրետանավակը ցնցվեց, հետո լերերաց, վոռ-  
նաց արկը, և պտուտակելով խրվեց լերկնքի  
մեջ: Պալթ լսն: Նա պերճորեն և լերկար տարած-



վում եր գեանի վրա: Չորս թնդանոթի փոխարեն, թշնամու մարտկոցն սկսեց պատասխանել լեռեքից:

— Ճանապարհորդը խփեց — տապալեց թընդանոթը, — ասաց ղեկանիվավալը:

Տրեները հետ դարձավ և շեշտակի նայեց նրա ծիծաղող աչքերին:

— Վոչ թե ճանապարհորդ, այլ ավագ հրետավոր, — ասաց նա այնպիսի ձայնով, վոր ծածկեց մարտի դղրդունը: — Մարտի ժամանակ հանաքները համարում եմ անտեղի:

Մարտը տաքանում եր: Ֆինները հազվագյուտ համառությամբ պաշտպանվում ելին հրաձրգությամբ: Սարվինգը՝ ծխով պատած իր հրետանավակի վրա, պարզ լեռնում եր հեռվից, թվում եր, թե կամրջակի վրա արձան ե կանգնած:

«Յառուզան» լեռեք համազարկով տապալեց գետի հարավային ափի մարտկոցը: Ականանավերը սլանում ելին հյուսիսային ափի լեռկաջնությամբ՝ կտրուկ շրջադարձին, ճոճելով դեղին լույսերը:

— Կրակը փոթորկալի աստիճանի լե հանում, — ասաց Տրեները, և բարձրացրեց հեռադիտակը: Հրետանավակի հաճախակի թնդուն-

ները խանգարում ելին նայել. ամեն մի հարվածից հետո՝ տեսողության դաշար հեռադիտակում տեղափոխվում եր:

Տրեները վերջապես գտավ թշնամու մարտկոցը և հայնոցե: Այն, ինչ նա տեսավ ապշեցրեց մինչև անգամ նրան, վոր ընտելացած եր կռիվների: Ջրահապատ կատերները՝ ծխի և փրփուրի մեջ կորած, սլանում ելին հենց ափի լեռկարությամբ, համարյա կողերով քերելով ժայռերը, և գնդացիներից գնդակահարում ելին հրանոթի սպասսփորներին: Ֆինները դես ու դեն ելին ընկնում, բայց կրակը չեյին թուլացնում:

Ժամի լոթին թշնամու մարտկոցները վերջապես լռեցին: Ֆիննական շտաբն այրվում եր: Ականանավերը կրակը տեղափոխեցին Վիդլեցկի արվարձանը, վորտեղից դանդաղ լեռկինք եր բարձրանում շիկակարմիր ծխի մի սար:

«Յառուզան» Տրեներին սեմաֆորով հաղորդեց հրաման՝ անմիջապես մտնել գետը: Տրեները լրիվ շարժընթացով ներխուժեց գետաբերանը, լեռկու ափն ել գնդակոծելով թնդանոթներից և գնդացիներից:

Հետ նայելով, նա տեսավ, վոր ականանավերը դադարեցրել են կրակը և կանգնեցրել մեքենաները:



— «Շա և րե» — ընկերաբար ազդանշանեց նրան Սարվինգը: Հին ծովագնացների լեզվով այդ կնշանակեր՝ «ամեն ինչ վերջացած է»:

— Հերիք է տրորվես, — պատասխանեց Տրեները:

Հետևից մոտենում ելին փոխադրանավերը: Սկսվեց դեսանտի ամհանումը: Տրեները՝ շրապներով գնդակոծելով աջ ափը, գետով վեր բարձրացավ: Յերբ նա վերադարձավ, ամհանումը վերջացել էր: Կրակը հանդարտվեց:

— Միթե շա և րե:

Տրեները դրպանից հանեց ձկան լուղի սըրվակը և մի քանի կում կոնյակ կուլ տվեց: Այդ ժամանակ գնդացիները չըխշըխկացին կարի մեքենաների նման: Բոլոր նավերից ծանր դղըրդոցով հարվածեց համադարկը: Ֆինները դեսանտը լիճը շարտելու վերջին փորձն ելին անում:

«Կասկալից», վոր անցավ հենց նավեզրի մոտից, Տրեներին ձայն տվին, վոր Ֆիններն իսկույն գնդացիալին կրակ կբացեն: Տրեները կրակն ուղղեց անտառափեշին: Բայց գնդացիը վորպես պատասխան, տրաքվող լեքկաթաճուպանի ձայնով, ձաղկեց տախտակամածի վերնաշենքերին, դուրս շարտելով տաշեղներ և փոշի:

Տրեները ձեռքը դուրս քաշեց դրպանից: Տախտակամածի վրա թևից կաթում էր պարզ արյուն, բայց նա ցավ չէր զգում: Յերկրորդ համադարկը ցնցեց ողը: Տրեները լերերաց ու նստեց, ապա դանդաղ չոքեց: Մարտայնենն առաջ վազեց:

— Մանիտար, — գոչեց նա և նրա աչքերն սպլտակեցին: — Շուտով սանիտար:

Կրակը շուտով հանդարտվեց: Մինչդեռ անփորձ սանիտարը բուլթ մկրատով կտրում էր շինելի հաստ թելը՝ Տրեները ատամները հուպ տված սպասում էր: Վիրակապումից հետո Տրեները կորցրեց գիտակցութունը: Նա սթափվեց, լերբ ամբողջ նավատորմիդը՝ խաբիսի գցած, կանգնած էր խաբսխակայանում:

«Յաուզան» և «Սոմը» բեռնում ելին հաղթանիշները — տասնմեկ թնդանոթ, լերկու հազար հրացան, տասնյերկու գնդացի, բազմաթիվ արկեր, փամփուշտներ, պարեն և մինչև անգամ շտաբի պետի գեներալական անդրավարտիկը, վորը լոկ սպիտակեղենով փախել էր դեպի Ֆիննական սահմանը: Այդ անդրավարտիկը, սվինի ծալրին զգվանքով բերեց սևազանգուր կարմիր բանակալինը և շարտեց տախտակամածին:



— Հը, ինչպէս լեղավ, — հարցրեց Տրենները Մարտայնենին:

— Ջախջախում: — Մարտայնենը՝ հրետանավակ ծառայութեան մտնելու որից, առաջին անգամ ժպտաց: Նրա ժպիտը պայծառ երևանկեղծ: — Ձեռքիդ դիպավ: Վոչինչ: Միասին կլողանք:

Տրենները դեռ չգիտեր, Վոր «Մուգիկանտ»-ը լերկորդ անգամ փառք եւ վաստակել: Կովի տաք ժամանակ Մարվինգը գերմաներեն լեզվով ուղիւ լեր բռնել Սերգոբոլից, վորտեղ կանգնած եր ֆիննական նավատորմիդը: Ըստ լերեվույթին ճակատամարտի արձագանքը հասել եր Սերգոբոլ: Ռադիոն հարցնում եր՝ «Հաղորդեցե՞ք՝ ի՞նչ եւ պատահել. ոգնութիւն հարկավոր ե»: Մարվինգը պատասխանում ե՝ «Ամեն ինչ բարեհաջող ե: Ոգնութեան կարիք չունենք»: Ֆիննական նավատորմիդը շարունակում եր հանգարտ որորվել Սերգոբոլի խարսխակայանում, և նույնիսկ հետախուզութիւն չուղարկեց Վիդլիցայի շրջանը:

Տրեններն ամբողջ որը պառկեց նավասենյակում: Լուսանցուցների հետևին ծանր գոլորշու նման փութած եր մառախուղը: Մառախուղի

ծածկոցի տակ, ահեղ և քնքուշ, լերդեցին ա-կանանավերի շոգեշշակները, վորոնք հրաժեշտ ելին տալիս նավատորմիդին: Ականանավերը գնում ելին Պետրոգրադ:

Յերեկոյան դեմ անիվները շլապացին, ջուրը խոխոջաց, դեկային շղթաները զրնգացին — նավատորմիդը հեռ գարձավ Սվիրիցա:

Մարտայնենը բերեց Տրենների համար մի գավաթ խոկական սև սուրճ: Առաջին անգամ նա լերկար և ուշադիր հարց ու փորձ եր ա-նում Տրեններին, սանցային շրջանի մասին: Տրեններն աշխուժացավ, մինչև անգամ գնդակա-հարված ձեռքի ցավը պակասեց:

— Ինձ զբաղեցնում ե, — Տրենները շփոթված ժպտաց, — մի միտք: Յերբ պատերազմը վերջա-նա, լեռ կփորձեմ շարադրել նրան թղթի վրա: Յես ուզում եմ գիրք գրեմ: Ինձ թվում ե, վոր լեռ միջոց կգտնեմ խափանելու սառույցների նոր արշավանքը:

Մարտայնենը վեր կացավ, ժամանակն եր գնալ և վերափոխին հանգստութիւն տալ — զառանցանքն սկսվում եր: Հանկարծ կոմի-սարի մտքովն անցավ, վոր թախթի վրա պառ-կած ե վոչ թե քառասունամյա կապիտան, այլ



մի լերեխա՝ հուզված ժյուլ Վեռնի ընթերցումով:

Յերբեք կյանքի մեջ — վնչ Ֆինլանդիայում, վորտեղ Մարտայնենն աշխատում էր Գանգի նավաշինարանում, վնչ Կրոնշտադտի նավատորմի դուռ — չէր հանդիպել այսպիսի տարորին՝ նաև և գրավիչ մարդկանց:

Իր նավասենյակում Մարտայնենը լերկար կանգնած էր լայն չուած վոտներով: Հետո նա բաց արեց արկղիկը, հանեց քրքրված «Նավարկութունների պատմութիւնը» գիրքը և գնաց Տրենների մոտ: Վերափորը քնած էր: Մարտայնենը գիրքը դրեց սեղանին, — թող վաղը կարդա:

Միջանցքում հանդիպեց հերթակալին, կատաղությամբ նայեց նրան և նկատողութիւնն արավ տախտակամածը վատ լվանալու համար: Սրանով նա, կարծես թե՝ քլիթ լեզավ ինքն իր հետ՝ իրեն վոչ հատուկ փափկության համար և, հանգստանալով, գնաց քնելու:

Առավոտյան ռազիո լեկավ, վոր վիզլիցյան ռպերացիայից հետո, սպիտակ ռազմաճակատը լերերաց, և Ֆիննները փախչում են դեպի սահմանը:

Նավատորմիղը Սվիերով վերադառնում էր

Ոնեգա լիճը: Գետը բերում էր փրփուր, արտացոլումները՝ լերկնքի, ամպերի, և ափերի վրա կախված կեչի անտառների: Նավատորմիղի նավերը գորշ կողերով կտորների էյին ձևում գարնան ալեկոծվող խաղաղութիւնը, վոր շեշտակի լողում էր գետով: Քարի սահանքների վրա նա բաժանվում էր հազարավոր կտորտանքների, բայց նորից արագությամբ առաջանում էր:

Տախտակամածի վրա լերգում էյին: Տրենների բավականութիւն էր պատճառում մտածել, վոր հրետանավակը գնում է արևոտ լերկրներ, և նավաստիները հոհում են, անկարող լինելով զսպել ուրախութիւնը:

— Հաղթութիւն, — շնչաց նա և քնեց:



Այս դեպքի նկարագրութուններն իզուր  
կլինե՞ր վորոնե՞ր պատերազմի պատմութեան մեջ,  
վոր հրատարակել ե ամերիկական զինվորական  
մինիստրութիւնը:

Ամերիկյան հարցուր տասներեքերորդ դունդը,  
վոր յեկել եր կովելու «կարմիր բոլոնների» —  
բոլշևիկների դեմ, բնակեցրին Մեդվեժից սարում,  
և գերանաշեն բլոկհաուզներում Մուրմանի ճա-  
նապարհի յերկարությամբ:

Լեյտենանտ Շերվուդը սպան եր այդ գնդի,  
վոր կազմված եր կարմրաթուշ և կուշտ զինվոր-  
ներից:

Բլոկհաուզներում թղի, կանֆետի և «վիրշինյա»  
չիբուխի ծխախոտի հոտ եր բուրում: Զինվոր-  
ներն ամեն ուր սափրվում եյին: Պահածուի բան-  
կաները շոյում եյին հայացքը՝ պիտակների  
յերփներանգությամբ:

Սպաների զրպաններում զիզի-պիզի բաներ  
կային, — կամ թավշյա նապաստակիկներ, կամ  
բրեյլով՝ նեապոլիտանական քարերից — վորպես  
թալիսման դժբախտութիւնների դեմ: Պատեֆոն-  
ները նվագում եյին ուրախ ուղիական յերգեր:  
— Պատերազմը — այդ վորսորդութիւն ե, —

շատ անգամ ասում եր լեյտենանտ Շերվուդը:  
Լայն սվիտերը հագին և ծխամորճն ամուր  
ատամների մեջ, նա նման եր քաղաքացի վոր-  
սորդի, վոր ընկերների ուրախ խմբի հետ յեկել  
ե անտառները գալլ խփելու, և աղվեսների համար  
թակարդ դնելու:

Շերվուդը խաղացող եր: Թղթախաղի ժամա-  
նակ նրա դեմքը սևանում եր: Նա տանում եր բո-  
լորին, և փողը պահում եր անփութորեն ու անզը-  
թությամբ: Նա ուներ խաղացողի բոլոր հատկու-  
թիւնները՝ — չոր սառնասրտութիւն, հիստերիկ  
դյուրագրգռութիւն և խոր համոզմունք, վոր  
ընթացատողներն ստեղծված են, վորպեսզի նա,  
Շերվուդը, հեշտ և դուրեկան կյանք ունենա:

Մինչև «կարմիր բոլոնների» հետ ունեցած  
պատերազմը, Շերվուդը յերբեք յերկուղ չի  
ուներեցել: Առաջին յերկուղը նա զգաց Տուվոյ  
գյուղում: Նա աշխատում եր այդ մասին չհի-  
շել:

Շերվուդը Տուվոյում իր գործխմբի հետ  
բոլշևիկների դեմ ապստամբութիւն եր կազմա-  
կերպում:

Յեթե Տուվոյին մոտենար մաքուր և փայլուն  
հաճանավ, կարելի չե Շերվուդը չվախենար:



կարելի չէ նա մինչև անգամ կռվի բռնվեր դե-  
սանախ՝ հարմար և թանկագին տարազ հագած  
կարմրաթուշ նավաստիների հետ: Այն կլինե-  
ր խիզախ ընդհարում գինակից ընկերների հետ,  
վորոք կտարբերվելին Շերվուդից միայն նրա-  
նով, վոր նրանք այլ ազգության մարդիկ կլի-  
նեյին:

Բայց հաճանավի փոխարեն Շերվուդը տեսավ  
կեղտոտ և ցածրիկ շոգենավ, վորը փախույ էր  
վառվում: Նոր թնդանոթների փոխարեն նա տե-  
սավ մի քոսոտ թնդանոթ, վոր հարվածում էր  
ցաքուցրիվ և հաճախակի: Իսկական նավաստի-  
ների փոխարեն ափ ելին դուրս վազում ցնցոտի-  
ներով մարդիկ, և վերջապես փալլուն սպալի  
փոխարեն նա նկատեց փոքր կաղմվածքով և  
կնոջ նման տղամարդ, վորի շինելը հիվանդա-  
նոցի խալաթի յեր նման:

Շերվուդը հասկացավ, վոր այդ մահ է, և վոչ  
մի ուրախ հրաձգության մասին խոսք լինել չի  
կարող: Նրանց աչքերում Շերվուդը կարդաց  
իր դատավճիռը. կարդաց վճռահանութուն՝ կրու-  
վելու մինչև ատամներով կրծոտած ձեռքերը:

Խաղացողի նյարդերը չդիմացան: Շերվուդը  
փախավ առանց մի գնդակ արձակելու:

Մեղվեթիյ սարում նա մի զեկուցում հնարեց,  
վորտեղ փախուստը ներփակեց ռազմական  
շարժւոն արտահայտությունների աջակիսի քա-  
նակի մեջ, վոր կորցնում էր փախուստի բը-  
նավորությունը, և դառնում էր «միանգամայն  
անհրաժեշտ նահանջ հակառակորդի գերազանց  
ուժերի ճնշման տակ»:

Հարյուր տասներեքերորդ գնդի ռազմական  
թափն արագությամբ քամահարվում էր:

Արշավը դեպի Պետրոգավոսկ դանդաղ էր  
գնում: Հարձակվող ամերիկացիներից կատաղա-  
բար պաշտպանվում էր միակ գումարտակը, վո-  
րին ամերիկացիները կոչում էին «խելագար-  
ների գումարտակ»:

— Կատաղած կառուն կարող է վախեցնել  
մինչև անգամ առյուծին, — ասում էր այդ առ-  
թիվ Շերվուդի ոգնական թոուզը:

Շերվուդն սկսեց նկատել, վոր զինվորներն  
— առաջվա ժամանակ նրանց հետ ինչքան հա-  
ճելի յեր հանաք անել — սկսել էին լուռ մնալ:  
Նրանք փափսում էին բլուհաուզներում, և ուշա-  
դրությամբ տնտղում էին սպաներին՝ իբր թե  
առաջին անգամն էին տեսնում նրանց:

Խաղացողի հոտառությամբ Շերվուդը կռահեց,



վոր զինվորները լրացուցիչ թուղթ են վերցրել, բայց վոչ մի կերպ չեւ կարողանում վորոշել — ինչ թուղթ: Ամբողջ բանը նրանումն է, թե յերբ կգնա այդ թուղթը և ում կոմբինացիան ուժեղ կլինի:

Պարզ է, վոր զինվորները կողմից խաղը կվարի սերժանտ Կելրին: Այդ հանգստացնում եր Շերվուդին: Բայց այդ նախկին այգեպանը ինչ կարող է անել:

Կելրիի նախկին զբաղմունքը՝ Կալիֆորնիայի այգիներում ծառեր խուղելը, նրա մեջ պիտի մշակեր այգեպաններին հատուկ հատկութուններ՝ բարություն, խոհերի հակում, մանավանդ առավոտյան, յերբ այգիները բուրում են մեղրամոմով և նարինջի ծաղիկներով:

Շերվուդը պատմեց Թոուզին իր յերկյուղի մասին:

Թոուզն սկսեց փրկիսովայել, — այդ նրա միակ թերութունն էր:

— Զատիկը, — ասաց նա, ուրախանալով սեփական հնարամտության վրա, — մատներով միշտ վեր է բարձրանում: Կելրին — զատիկ է: Նրա հետ գործ ունենալիս, ձեռքդ յերբեք ցած մի թողեք, նրան պահեցեք մատները վեր: Ցուլց տվեք յերկինքը, և Կելրին ահամա կսողա դեպի յերկինք:

— Զառանցանք է, — փնթփնթաց Շերվուդը: — Ավելի լուրջ խոսեք:

— Այդ զինվորի վերամբարձ մտածելակերպին անհրաժեշտ է աջակցել:

— Պետք է ձևացնենք, վոր մենք բուսակերներ ենք, և «կարմիր բոլոններին» սպանելը մեզ համար նույնքան տհաճ է, վորքան սեփական ձեռքով աքաղաղ մորթելը: Դարձեք նրա համախոհը, դրանով զինաթափեցեք նրան: Հայհոյեցեք գնդի հրամանատարին: Հաճախ յերգեցեք «Հայրենի աստղը»: Կարոտեցեք հայրենիքը: Անախորժությունից ազատվելու ուղիղ ճանապարհն է այս:

Շերվուդը Թոուզին ուղարկեց գրողի ծոցը, և վորոշեց զվարճանալ: Նրանց վաշտը կանգնած էր թիկունքում՝ Դիանա սարի մոտ: Ընդհարումներ «բոլոնների» հետ չկալին, այդ շատ եր հանգստացնում զինվորներին: Թոուզն առաջարկեց պիկնիկ սարքել մոտակա լճի մոտ: Պիկնիկի որը հիշեցրեց Շերվուդին Կալիֆորնիայի ամառը:

Արևի լույսը վողողում էր խոտը, վորտեղ ճկճկում էյին ճպուռները: Թվում էր թե մեծ բարձրութունից ուլունք եր թափվում լիճը:



Ռոմից գլուխը դռուում եր՝ լարած գիթառի  
լարի պես: Պատեֆոնը շվշվացնում եր խիզախ  
ռազմական լերդ:

Ձկա աշխարհում  
Ձինվորից սիրունիկ,  
Գիտի աչդ մասին  
Կեռը գեղեցիկ:

Թոռուզն՝ ինչպես միշտ աշխարհի դեպքերում,  
խոսում եր զինվորական կյանքի վսեմության  
մասին: Նրա խոսքը հնչում եր անխարդախ պա-  
թոսով:

— Ի՞նչ ե գինվորը, — գոչում եր նա կցկատուր,  
և բաժակը զարկում ուռա կնոջ բաժակին, վորը  
հրավիրված եր պիկնիկին Մեդվեժի սարից: —  
Ձինվորը — աչդ մի մարդ ե, վոր ճանաչում ե  
բոլոր ովկիանոսների ջրերի գույնը, ահա թե՛  
ինչ ե գինվորը:

Ձորագնդերը քայլում են ամենուրեք, — և  
Ռուսաստանի ձյուններով, և Պաղեստինի լերկրով:  
Ուտար քամին ե ազմկում մեր դրոշների մեջ:  
Ձեռ կենացը, բաց հավատացեք, վոր հարբած  
չեմ: Փռոքն արևի պես վառվում ե մեր գլխավե-  
րին, — հաղթանակների փառքը, և վտանգնե-  
րի հրապույրը: Մեր սվինների վրա մենք կրում  
ենք հայրենի դաշտերի ծաղիկները: Մենք մտքով

համբույրներ ենք ուղարկում աշխիկներին, վո-  
րոնց թողել ենք ովկիանոսի ափն կողմը: Ձինվո-  
րի կյանքը հրաշալի ե: Ձինվորի կյանքը հնչում  
ե, վորպես քայլերդ: Բաց, գժբախտաբար, շատ  
հաճախ նա լինում ե նույնպես կարճ, նույնպես  
կարճ:

Թոռուզն ընկավ ախուր տրամադրության  
մեջ, և ուռաուհուն առաջարկեց նավակով զբոս-  
ներ:

Շերվուզն աննկատելի կերպով նավակից մի  
բարակ թուկ կապեց, և լերը նա մի քանի քայլ  
հեռացավ ափից, արագությամբ հետ քաշեց:  
Թոռուզը թիավարում եր, ջուրը ցայտեցնում  
թիակներով, և հայցուցում եր:

Շերվուզը թողեց նավակը, բաց նորից քա-  
շեց նրան նույն ուժով: Նավակը խրվեց ափի  
մեջ: Կինն ընկավ: Նրա թեթև մետաքսե հա-  
գուստը թրջվեց: Նա ակամա ժպտում եր: Շեր-  
վուզը հռնում եր:

Այդ բոպելին լերեաց Կելրին: Նա գալիս եր  
անտառի արահետով, և լերևում եր հեռվից: Նա  
հրացանը պահում եր հորիզոնադիր: Նրա առ-  
ջից գալիս եր ձեռքերը կապած, բարձրահա-  
սակ, վտիտ մի մարդ: Պատուված փեշը խփում  
եր նրա վոտքերին:



Անդուրեկան լուսթյուն տիրեց:

Շերվուդն ալյումինի բաժակով ումը շուռ տվեց բուկը, շոշափեց գրպանում ատրճառակը և կանգնեց: Թոուզը և կինը մոտեցան հետևից:

— Գերի, — ասաց Կելրին, շրխացրեց հրացանը գետնին և անշարժացավ:

— Նավաստի՛ չեք, — հարցրեց Շերվուդը գետնից հոտորտված ուսերենով:

Գերին լուռ եր:

— Վճր զորամասիցն եք:

Գերին լուռ եր:

— Յեթե դուք չեք դադարի լռելուց, լես հարկադրված կլինեմ ձեզ հետ վարվել, վորպես լրտեսի հետ:

Գերին լուռ եր:

— Գողի տղա, — ասաց Շերվուդը կամաց, — յեթե դուք կանվանեք ձեր զորամասը և սվինների քանակը, լես ձեզ բաց կթողնեմ: Ձեր ներկայությունը «բուրների» բանդայի մեջ նրանց չի փրկի: Շերվուդն սպասեց, բայց գերին վոչինչ չպատասխանեց:

— Կոմիսսը — կռահեց Շերվուդը և նայեց գերու գեմքին:

Գերին նայում եր Շերվուդին շեշտակի և

հանգիստ: Շերվուդը հետ ընկրկեց: Գերին մի քալ արավ առաջ՝ աչքերը չհեռացնելով Շերվուդից: Կելրին հրացանի կոթը խփեց գետնին և նույնպես մի քալ առաջ շարժվեց:

— Այս կոմեդիան ինձ դուր չի գալիս, — գոչեց Շերվուդը զայրացած:

— Ձայն կհանես թե չե, շան միս:

Գերին շարունակում եր գիտել Շերվուդին:

— Համը ե՛, ինչ ե — հարցրեց Շերվուդը Կելրին:

— Վոչ, սեր, նա խոսում եր, և մինչև անգամ ծիծաղում:

Շերվուդի աչքերը կարմրեցին: Գլխի մեջ շառաչում եր կտրվելու պատրաստ լարը:

— Խոսիր, — նա գերու վրա շարտեց բաժակի մնացած ումը: Հարցաքննման ժամանակ Շերվուդի ձեռքին եր բաժակը:

Գերին մի քալ առաջ լեկավ և թքեց Շերվուդի յերեսին: Կինն աղաղակեց: Կելրին կանգնած եր ձգված:

— Ա՜մ-ա — Շերվուդը հետ թռավ դեպի սոճին:

Թոուզը գիտեր վոր իսկույն կսկսվի նոպան:

— Սերժանտ, մի փամփուշտից ավել չփչաց-



Անդուրեկան լուսթյուն տիրեց:

Շերվուդն ալյումինի բաժակով ումը շուռ տվեց բուկը, շոշափեց գրպանում ասորճանակը և կանգնեց: Թոուզը և կինը մոտեցան հետևից:

— Գերի, — ասաց Կեյրին, շրխկացրեց հրացանը գետնին և անշարժացավ:

— Նավաստի՞ լեք, — հարցրեց Շերվուդը գերուն կոտրաված ուսերենով:

Գերին լուռ եր:

— Վո՞ր զորամասիցն եք:

Գերին լուռ եր:

— Յեթե դուք չեք դադարի լռելուց, լես հարկադրված կլինեմ ձեզ հետ վարվել, վորպես լրտեսի հետ:

Գերին լուռ եր:

— Գողի տղա, — ասաց Շերվուդը կամաց, — լեթե դուք կանվանեք ձեր զորամասը և սվինների քանակը, լես ձեզ բաց կթողնեմ: Ձեր ներկայութունը «բոլոնների» բանդայի մեջ նրանց չի փրկի: Շերվուդն սպասեց, բայց գերին վոչինչ չպատասխանեց:

— Կոմիսար — կռահեց Շերվուդը և նայեց գերու դեմքին:

Գերին նայում եր Շերվուդին շեշտակի և

հանգիստ: Շերվուդը հետ ընկրկեց: Գերին մի քալ արավ առաջ՝ աչքերը հինուացնելով Շերվուդից: Կեյրին հրացանի կոթը խփեց գետնին և նույնպես մի քալ արավ շարժվեց:

— Այս կոմեդիան ինձ դուր չի գալիս, — գուցե Շերվուդը զայրացած:

— Ձախ կհանես թե չե, շան միս:

Գերին շարունակում եր դիտել Շերվուդին:

— Համը ե, ինչ ե — հարցրեց Շերվուդը Կեյրին:

— Վոչ, սեր, նա խոսում եր, և մինչև անգամ ծիծաղում:

Շերվուդի աչքերը կարմրեցին: Գլխի մեջ շառաչում եր կտրվելու պատրաստ լարը:

— Խոսիր, — նա գերու վրա շարժեց բաժակի մնացած ումը: Հարցաքննման ժամանակ Շերվուդի ձեռքին եր բաժակը:

Գերին մի քալ արավ լեկավ և թքեց Շերվուդի լերեսին: Կինն աղաղակեց: Կեյրին կանգնած եր ձգված:

— Ա-ա-ա — Շերվուդը հետ թռավ դեպի սոճին:

Թոուզը գիտեր վոր իսկույն կսկսվի նոպան:

— Սերժանտ, մի փամփուշտից ավել չփչաց-



նել սրա վրա: Քանի՜ փամփուշտ ունեք: Հի՛նգ:  
Կես ժամից հետո թողզը կստուգի՝ ձեր հրա-  
ցանք: Նրա մեջ պիտի մնացած լինի չորս փամ-  
փուշտ, ալլապես դուք կճոճվեք առաջին սեմա-  
ֆորի վրա:

— Կո՛ւմ եմ, — խուլ պատասխանեց Կելրին,  
բզեց գերու թևը և նրա հետ գնաց անառի  
խորքը:

«Քիտի ալդ մասին Կետը գեղեցիկ», շվաց-  
նում եր ամեն ինչի անտարբեր պատեֆոնը:

Պիկնիկը խափանվեց: Թողզն ու ուռն կի՛նը  
վերադարձան գյուղ: Շերվուդը մնաց:

Նրա գլուխը ցավալ սկսեց: Նա ուզում եր  
ազատ շունչ քաշել:

Կես ժամից հետո սերժանտ Կելրին յեկավ  
թողզի մոտ, և լուռ տվեց հրացանը: Թողզը  
ծուլ-ծուլ ստուգեց փամփուշտները: Նրանք  
չորս հատ ելին:

Յերկու ժամից հետո լճի ափին հայտնաբե-  
րեցին լեյտենանտ Շերվուդի դիակը. գնդա-  
կահարված եր գլխից:

Այդ յերեկոյան զինվորները բարակներում  
աղմկալից եր և անհանգիստ: Թողզը լուռ եր՝  
ինչպես զինվորները յերգում ելին սիրած յերգը՝

Շուտ դուրս յեկ, ասող հայրենի,  
Հեռու աշխարհը տանջեց իմ հոգին:  
Ի՞նչ արած, յեղբայր: Զինվորի ցավերը  
Զի մարի փրփրուն գինին:

Մի շաբթից հետո հարցուր տասներեքերորդ  
գնդի զինվորները հրաժարվեցին կռվել, և պա-  
հանջեցին անմիջապես հայրենիք ուղարկել:

Գունգը քաշեցին դեպի ովկիանոս, և նստեց-  
րին փոխադրանավերը:

Վեց ամսից հետո, հարցուր տասներեքերորդ  
գնդի սերժանտ Ջոն Կելրին մահվան դատա-  
պարտվեց՝ նույն գնդի լեյտենանտ Գորդոն Թո-  
մաս Շերվուդին սպանելու համար:

Դատարանում Կելրին ցույց տվեց հետեվյալը.  
— Լեյտենանտ Գորդոն Շերվուդին յես  
սպանեցի, և սպանեցի նրա համար, վոր նա ան-  
պիտան եր:

1919 թվի դարնան ինձ նրա հետ ուղար-  
կեցին Տուրվուզ գյուղը, Ռենգա լճի ափին,  
այնտեղ բուլղիկները դեմ ապստամբութուն  
բարձրացնելու համար:

Մենք Տուրվուզում մնացինք յերեք ուր: Զոր-  
րորդ ուրն ափին մոտեցավ բուլղիկները հրետա-  
նավակը, կրակ բաց արեց և զհասնտ իջեցրեց:



Նա կազմված էր, ինչպես հետո պարզվեց, գընդի յերաժիշտներից, վորոնք հազիվ եյին տիրապետում հրացաններին, մենք փախանք, առանց մի փամփուշտ ծախսելու:

Փողոցի շատ նեղ տեղում լեյտենանտ Շերվուդը հանդիպեց մի կնոջ: Նա տանում էր ձեռքից բռնած յերեք տարեկան մի աղջիկ: Յես հետևից եյի վազում, և ամեն ինչ տեսա: Լեյտենանտ Շերվուդը գտնվում էր յերկյուղի այն դուռթյան մեջ, յերբ թվում է, վոր ամեն մի վալըկյանը թանգ է սեփական կյանքը փրկելու համար: Նա յենթադրում էր, վոր յերեխան հետը կինը կուշացնի նրա փախուստը: Առանց կանգնելու՝ նա դուրս հանեց ձեռնանոնակը, տեղահան արավ ողակը և շարտեց դեպի կինը: Պայթյունից սպանվեց աղջիկը:

Դեռ այն ժամանակ իմ մեջ միտք ծագեց սպանելու այդ սպային:

Մենք վերադարձանք Մեդվեժիկ սարը: Այստեղ յես պատահեցի բոլշևիկներին, վորոնք մեր թիկունքն եյին անցել:

Յես իմացա, վոր մենք հիմարաբար խաբվել ենք: Յես տեսա մարդիկ, հազար անգամ

ինձ ավելի մոտ արշուճով և հոգով, քան ամերիկական գնդերի սպաները:

Դատարանի նախագահն զգուշացրեց, վոր այդ նկատողությունը կրկնապատկում է նրա հանցանքը, և ուժեղացնում է նրա պատիժը:

— Մահապատժից ավելի ինձ վոչինչ չեք կարող անել:

— Շարունակեցեք, — խոժոռվեց նախագահը:

— Մեդվեժիկ սարի մոտ, մեր զորամասի պահեստում կանգնած ժամանակ, յերեք զինվորից բաղկացած պարեկը բռնեց անտառում մի բոլշևիկ-նավաստի: Յես նրան բերի լեյտենանտ Շերվուդի մոտ:

Լեյտենանտն իր ոգնական թողզի և ինձ անձանոթ ոռու կնոջ հետ զբաղված էր հարբեցողությամբ լճի ափին: Գերին հրաժարվեց ցուցմունքներ տալուց: Լեյտենանտը կատաղեց, և նրա վրա շարտեց իր բաժակի մնացած ումը:

Այս բանի համար նրա յերեսն արժանացավ թուրի:

Կելրին կանգ առավ:

— Լեյտենանտն ինձ հրամայեց գնդակահարել գերուն: Յես նրան հեռացրի քառորդ մղոն և բաց թողի, տալով նրան հանապարհի համար



ծխախոտ և լուցկի: Հետո վերադարձա լեյտենանտի մոտ: «Անդգամն սպանված ե», — հարցըրեց նա ինձ: — «Այո», պատասխանեցի լեւ և կրակեցի նրա լերեսին:

Յես արի աչն, ինչ կարևոր եմ համարում: Բոլոր մնացածը շատ լավ հայտնի լե:

— Դուք բոլշևիկ եք, — հարցըրեց նախագահը:

— Վերջացրեք, — պատասխանեց կեյրին:

Դատարանի դահլիճում լուսթյուն տիրեց: Ուղեկցորդի սենյակից գալիս եր խուլ լերգի՝ ձայն՝

Շուտ դուրս յեկ, ասող հայրենի,

Հեռու աշխարհը տանջեց իմ հոգին:

Ի՞նչ արած, յեղբայր: Զինվորի ցավերը

Զի մարի փրփրուն գինին:

Նախագահը քարտուղարին ուղարկեց լերգը դադարեցնելու:

Ոգոստոսին «Մուգիկանտ» հրետանավակը, հետախուզութուն կատարելու հրաման ստանալով, մոտեցավ լճի արևելյան ափին, Պեսչանի պոգոստի կոչվող վայրի մոտ:

Վաղահաս աշունն անտառային ճանապարհներն արգեն ծածկել եր խոնավ տերևներով: Քամին նրանցից կուլտեր եր կազմում Պեսչանսկի վանքի խարխուլ շրջապարիսպի մոտ:

«Մուգիկանտի» բոցման Միրոնովն ափ գնաց: Յերկար թափառում եր վանքի պարսպի շուրջը, սունկ եր վորոնում: Հետո մտավ վարդապետների մոտ, ծիծաղելով զրուցեց աշխարհի վերջի մասին, իսկ լերեկոյան զեկուցեց Սարվինգին, վոր վարդապետներից մեկին անմիջապես պիտի ձերբակալել:

— Ի՞նչ հիշ:

— Կարճամազ ե, — պատասխանեց Միրոնովը:

— Նրա մատին մատանու հետք կա: Վարդապետները մատանի չեն կրում:

Սարվինգը համաձայնվեց:

Յերեկոյան Միրոնովը լերկու նավաստի վերցրեց և գնաց վանքը: Զղջիկները՝ թևերով համարյա քսվելով լերեսներին, դես ու դեն ելին թռչում:



— Յաճրահասակ անտառով և դեղին խոտով ծածկված պարապուտները, անտառահատումները և ճահիճների վրա բարձրանում եր ժանգոտ լուսինը:

— Ահա, — ասաց Միրոնովը, նայելով լուսին:

— Յես յեղեւ եմ Ամերիկայում: Այնտեղ ռեստորաններում ալգալիսի պղնձե կոչնագանդ են խփում, պարոններին հրավիրում են դինինգ-ռում ճաշելու:

Միրոնովը մինչև հեղափոխությունը առևտրական նավատորմի նավաստի լիւր: Նա լողում եր Փրանսիական շոգենավով Շերբուրգի և Ռիո-դե-ժանեյրոյի միջև: Բրազիլիան նա չեւ սիրում:

Ընկերների ագահ հարցերին, այդ յերևակայական յերկրի մասին, նա պատասխանում եր կարճ՝

— Շոգ ե շատ: Այնպես շոգ ե, վոր հալ չի մնում: Վոչ մի բաղնիք հարկավոր չե: Քրտինքն ախպես ե դուրս հոսում, ինչպես տապակած գոճուց ճարպը: Մանր և ջղախին ժողովուրդ ե: Ման են գալիս պտտվում են, ծվծվում ճնճղովկների նման, — ույժ չկա ժողովրդի մեջ: Նախագահներն ամեն տարի սպանում են իրար, և միայն տուրքերով հասարակ մարդկանց հոգին են հանում,

դեռ բանտերի մասին չեմ ասում: Վողորմելի լերկիւր ե:

Միրոնովը զոռով եր խոսում, կակազում եր, վարմրում:

Խոսակցութիւնը նրա համար տաժանակիր աշխատանք եր: Նա կգերադասեր իր ձեռքով նորից ներկել հրետանավակը, քան պատասխանել ընկերների ձանձրացնող հարցերին:

Միրոնովին անմիջապես «հոետոր» անվանեցին:

Յերբ խոսակցութիւն եր սկսվում վորևե տեղ գլուղական ժողովում լելույթ ունենալու մասին, կատակասերները՝ պահվելով վստահելի հարևանների թիկունքում, բղավում ելին՝

— Տվեք Միրոնովին: Նրա լեզուն մեքենայորեն ե աշխատում:

— Լեզուդ քեզ քաշի, ենպես կհասցնեմ, վոր ճանփեդ չես գտնի:

Վանքի դռները փակ ելին: Միրոնովը ծեծեց մաուզերի կոթով: Հոտած բերանով վարդապետը բաց արեց դռնակը:

— Դու, հալրիկ, գոնե ողի խմելիւր, ընդերքդ սրբութիւնից հոտում ե, — ասաց Միրոնովը, ներս խցկվելով դռնակով:

Վարդապետը մինչև գոտին խոնարհվեց:



—Տար, վանահոր մոտ:

—Նա աղոթում է աստծուն, — սվսվաց վարդապետը և թարթեց քոստա աչքերը. — Հիմա նրան չի կարելի անհանգստացնել:

—Տար, ասում եմ:

Վարդապետը ժրուխտմբ վազեց մուխոտով ծածկված բակով:

Վանահոր սենյակում, պատերի վրա վազվզում էին վտիտ ուտիճներ: Աղոտ լուսավորում էին կանթեդները, և միայն լուսինը, փոշոտ պատուհանից դուրս, փայլում էր վորպես կլոր վոսկյա սրբապատկեր:

Վանահայրը լուռ դուրս լեկավ: Նա չոր ձեռքերով սեղմում էր կրծքին լեղկաթյա խաչը և քթով բարակ ֆսֆսացնում էր:

— Վհրտեղ ե ձեր սուրբ թափառականը, հայրիկ, — հարցրեց Միրոնովը:

— Ինչի՞ համար ե նա ձեզ պետք, նավատիկներ, — հարցրեց վանահայրը բասով: — Ինչո՞ւ եք վրդովում կուսակրոնների հանգիստը: Մթթե չի կարելի տիրոջը կոչել ձեր լեղբայրասպան գործերի մեջ: Խաղալիքը պահիր, — վանահայրը գլխով արավ դեպի ատրճանակը: — Աստված կլանք ե տվել, աստված ել կլերցնի նշանակած ժամանակին:

— Մի թոնթորա պատրիարք: Միրոնովն սկսում էր բարկանալ: — Մենք աստծու փոխարեն կճանկենք ում հարկավոր ե:

Վանահայրը ձեռքերը բարձրացրեց դեպի լերկինք և որորեց գլուխը: Միրոնովը հետ հրեց նրան և մտավ հետևի սենյակը:

— Նորին բարեծննդութուն հրետանավակի հրամանատար կապիտան Յերչենկոն, — ասաց Միրոնովը, — խնդրում ե ձերդ մեծապատվությանը շնորհ բերել մեզ մոտ նավը, մի բաժակ թեյի:

— Առաջնորդիր, — ասաց թափառականը, և զինվորականի ամուր քայլվածքով գնաց դեպի դուռը: Նրա դեմքը հանգիստ էր և հոգնած: — Առաջնորդիր, — կրկնեց նա: — Միկնույն ե, այս եր քո բախտը:

Հրետանավակում թափառականին խուզարկեցին: Փարաշի և հոտած փախսների տակ գտան մի ծրար՝ անգլիական տեղեկագրերով, տպագրած պապիրոսի թղթի վրա: Վոլոգդայի մեծբրիտանական հավատարմատարի անունով տեղեկագրերն ստորագրել էր գեներալ Ուոլըր, և, դատելով բովանդակութունից՝ ուղարկված էին Մուրմանսկից:



—Տար վանահոր մոտ:

—Նա աղոթում է ասածուն, — սվալաց վարդապետը և թարթեց քոսոտ աչքերը. — Հիմա նրան չի կարելի անհանգստացնել:

—Տար, ասում եմ:

Վարդապետը ժրուխտմբ վազեց մոլախոտով ծածկված բակով:

Վանահոր սենյակում, պատերի վրա վազվզում ելին վտիտ ուտիճներ: Աղոտ լուսավորում ելին կանթեղները, և միայն լուսինը, փոշոտ պատուհանից դուրս, փայլում էր վորպես կլոր վոսկյա սրբապատկեր:

Վանահայրը լուռ դուրս լեկավ: Նա չոր ձեռքերով սեղմում էր կրծքին լեզկաթյա խաչը և քթով բարակ ֆսֆսացնում էր:

—Վհրտեղ ե ձեր սուրբ թափառականը, հայրիկ, — հարցրեց Միրոնովը:

—Ինչի՞ համար ե նա ձեզ պետք, նավաստիկներ, — հարցրեց վանահայրը բասով: — Ինչո՞ւ եք վրդովում կուսակրոնների հանգիստը: Մի՞թե չի կարելի տիրոջը կոչել ձեր լեղբայրասպան գործերի մեջ: Խաղալիքը պահիր, — վանահայրը գլխով արավ դեպի ատրճանակը: — Աստված կյանք ե տվել, աստված ել կվերցնի նշանակած ժամանակին:

—Մի թոնթորա պատրիարք: Միրոնովն սկզբում եր բարկանալ: — Մենք ասածու փոխարեն կձանկենք ում հարկավոր ե:

Վանահայրը ձեռքերը բարձրացրեց դեպի լեզկինք և որորեց գլուխը: Միրոնովը հետ հրեց նրան և մտավ հետևի սենյակը:

—Նորին բարեծննդութուն հրետանավակի հրամանատար կապիտան Յերչենկոն, — ասաց Միրոնովը, — խնդրում ե ձերդ մեծապատվությանը շնորհ բերել մեզ մոտ նավը, մի բաժակ թեյի:

—Առաջնորդիր, — ասաց թափառականը, և զինվորականի ամուր քայլվածքով զնաց դեպի դուռը: Նրա դեմքը հանգիստ էր և հոգնած: — Առաջնորդիր, — կրկնեց նա: — Միևնույն ե, այս եր քո բախտը:

Հրետանավակում թափառականին խուզարկեցին: Փարաշի և հոտած փախսների տակ գտան մի ծրար՝ անգլիական տեղեկագրերով, տպագրած պապիրոսի թղթի վրա: Վոլոգդայի մեծբրիտանական հավատարմատարի անունով տեղեկագրերն ստորագրել էր զենեբալ Ուոլը, և, դատելով բովանդակութունից՝ ուղարկված ելին Մուրմանսկից:



Թափառականի կրծքի վրա հայտնաբերեցին գնդակի վերքի սպիւն: Բայց նախաստիներին առանձնապես զարմացրեց այն հանգամանքը, վոր Թափառականի թևատակերը մաքուր սափըրված էին:

— Ինչի՞ յե պետք այս դիվային գործը, — հարցրեց Միրոնովը:

— Վոջիլների դեմ, — հանգիստ պատասխանեց Թափառականը: — Վտանգը քիչ է: Բայց չէր կհարցաքննի ինձ քո հրամանատարը:

— Համբերիր: Կվերջացնի, այն ժամանակ ել կհարցաքննի:

— Իսկ չէր գնդակահարութիւն:

— Գնդակահարութիւն համար մի նեղանա: Վոչ վոք գնդակահարութիւնից չի ազատվում: Կարելի չէ գնդակահարութիւն փոխարեն դու մեզ մոտ խոհարար կլինես, — խող խանձող: Կմնաս մեզ մոտ գերակետ ծառայութիւն: Ամեն ինչ կարող ե լինել, պարոն սպա:

Սարվինգը տեղեկագիրը թարգմանեց և հրամայեց բերել կալանավորին: Ընդհանուր նախասենյակում սեղանի վրա դրված էր մի տոմս, վոր գտել էին գերու մոտ՝ 13 և 57 թվանշաններով, բրաունինգ և վոսկե կոճակ՝ արծիվով:

— Նստեցեք, տեղակալ, — Սարվինգը խոսում

էր շատ դանդաղ, և նրա ուռած դեմքի վրա, հակառակ սովորականի, նույնիսկ ժպտի ըստ վեր չկար:

— Յես տեղակալ չեմ, այլ փոխգնդապետ, բայց այժմ այդ կարեւոր չէ:

Սարվինգը ժպտաց:

— Այժմ կարևոր ե միայն այն, վոր դուք սովորական լրտես եք, — ասաց նա տնտղելով թղթերը: — Բայց տհաճ բաներ չհիշենք: Խոսենք ավելի հետաքրքիր թեմաների մասին: Որինակ, չէք հանդիպել արդոք Մուրմանսկում անգլիացու՝ սպիները դեմքին: Այսպիսի սպիներ մնում են ցրտահարված տեղերում: Ինչպես կուզեք, հիսուն աստիճան դերոյից ցած — դա բզեզի չանչի դիպչելը չի: Մրրիկների ժամանակ, և վատ սընընդի դեպքում, ամեն ինչ վերջանում ե փտախտով և մահով: Այսպես, չի՞ պատահել վոր դուք զրուցեք այդպիսի սպիներով պատած մարդու հետ:

Սպան մի քիչ լուռ մնաց:

— Այո, այդպիսի մեկին կարծես տեսել եմ, բայց հետը չեմ խոսել: Յես անգլերեն չգիտեմ:

— Նշանակում ե՞ դուք չգիտեք նաև այս փաս-



պել չգիտեք: Շատ եք քնքշացել, սատանաներ:  
— Նախ ձեզ կուղարկեմ նավատորմիղի շտաբը: Յեթե լրտեսը կենդանի չե ձեռք ընկնում, այն ժամանակ նրան սովորաբար մանրում են: Այսպես ե չգրված որենքը: Բայց ընդհանրապես շտաբում կնայեն:

Յերկու հրացանավոր նավաստիներ ձերբակալվածին տարան նավասենյակ:

Գիշերը հրետանավակը ճանապարհ ընկավ նավատորմիղին միանալու:

Սարվինգը նստած եր նավասենյակում, գլխարկը չեռ դրած ծոծրակին, շատ ծխում եր և նորից կարգում եր սպալից վերցրած փաստաթղթերը: Նա լույս չեր վառում: Լուսամուտներից թափանցում եր հյուսիսային մռայլ գիշերվա լույսը:

Սարվինգը հուզվում եր: Նա ինքն իրեն հայհոյանքներ եր փնփնթում, փորձում եր կանգնել, բայց նորից եր նստում ճոճառն թախտին, և լերկար նայում լճի սպիտակավուն քարտեղին, վորտեղ լերևում ելին ափերի ու խորությունների բարակ, համարյա ջնջված գծերը: Հուզմունքն արտահայտելու համար, նրան խոսակից եր հարկավոր: Պոսակից չկար: Բայց չե-

թե լիներ ել, միևնույն ե, Սարվինգն իր մրաքերը չեր կարող արտահայտել, վորովհետև նրանք վերաբերում ելին բոլորովին գաղտնի փաստաթղթերի: Այդ պատճառով Սարվինգը զրուցում եր քարտեղի հետ:

— Գարշելի կոմբինացիա չե ստացվում, — ասում եր նա՝ հաճախ մտասուղվելով: — Ահա չես, Յերչենկոս, հեռավոր նավարկության ղեկավար... Նավարկել եմ չես և՛ Ատլանտյան, և՛ Պաղատովկիանոսում, ծովեզրյա նավագնացների պես չեմ կպել ափերին: Թքած փարոսների վրա: Մենք լերկու շաբաթով փարոսի լերես չեյինք տեսնում:

Մանկությունից, հասկանում ես, ուղղակի մանկությունից, չես թելի և ծխախոտի հետ միասին, ներս եմ ծծել հարգանք դեպի իմ զբաղմունքը:

Ծովագնացները լճային ջուր ծեծողները չեն: Ո՞վ ե գտել նոր լերկիրները: Ո՞վ ե նկարագրել ափերը, ուսումնասիրել հոսանքները, վոչնչացել բևեռների մոտ: Մեզ պես մեկը՝ ծովագնացը: Ո՞ւմ շնորհիվ ե գտնված Դարվինի թեորիան: Շնորհիվ ծովագնացների և «Բիզլ» նավի: Յեթե չլինեյին նավերը և նավարկու-



տաթղթերի բովանդակութիւնը, — Սարվինգը ձեռքը դրեց պապիրոսի թղթի թերթի վրա:

— Վնչ:

— Դուք վատ լրտես եք, — Սարվինգը գորշ աչքերը գցեց սպալի վրա. նրա հայացքում զգական և հոգնածութիւն կար: — Դուք մարդկանցով չեք հետաքրքրվում: Դուք չեք հետաքրքրվում մինչև անգամ գաղտնի ծրարներով, վորոնց պատճառով վտանգում եք ձեր կյանքը: Հենց այդ պատճառով ել այդպես հեշտ ծուղակն ընկաք:

— Այդ չե պատճառը, — պատասխանեց սպան, փաթաթելով մախորկան: — Յես վոտքով անցել եմ Պովենցից մինչև Պեսչանի պողոտա: Յես հոգնած եմ: Ամեն ինչ ձանձրացրել ե ինձ: Վերջը մեկ ե:

— Ձերբակալութիւնից հետո զոջումը վոչ մի արժեք չունի:

Սպան լուռ եր:

— Դուք ուր եյիք գնում:

— Վոլոգդա:

Սարվինգը կամաց շփացրեց, — բավական հետու լե: Նա շուռումուռ տվեց վոսկյա կոճակը և 13 ու 57 թվանշաններով թուղթը:

— Այս ի՞նչ ե:

— Դատարկ բան ե: Վոլոգդայում լեա այդ կոճակը պիտի կարելի վերնաշապկիս, վորպեսզի մերոնք ձանաչելին ինձ: Իսկ 13 և 57 — այդ պարոլ ե և պատասխան: Վոլոգդայում՝ նաւակայանում, լեա պիտի հանդիպելի մարդու՝ նույնպիսի վոսկյա կոճակով և նրան պիտի ասելի «տասներեք»: Յեթե նա պատասխաներ «հիսունյոթ», կնշանակի մերն ե: Յես նրան հանձնում եմ ծրարը, և ստանում եմ նոր առաջադրութիւն: Ահա բոլորը:

Սարվինգը կոճակն ու տոմսը դրեց կապույտ բաճկոնի գրպանը, վորը շատ շփվելուց փայլում եր:

— Մարդ կուղարկե՞ք Վոլոգդա:

— Տեսնենք:

— Ինձ համար միևնույն ե: Շոտ կուղարկեք ինձ Դուխոնինի շտաբը:

Սարվինգը մատներով թմկահարեց սեղանին: Լուսամուտների հետևին դժգուշն աստղերը սարսափելի հեռու ելին թվում: Կարծես հրետանաւովակը գտնվում եր Խաղաղ ովկիանոսում: Միջնորմի հետևին մեկը բարկացած ասաց՝

— Գրողը տանի ձեզ, վանդի պարանը կա-



պել չգիտեք: Շատ եք քնքշացել, սատանաներ:

— Նախ ձեզ կուգարկեմ նավատորմիդի շտաբը: Յեթե լրտեսը կենդանի չե ձեռք ընկնում, այն ժամանակ նրան սովորաբար մանրում են: Այսպես ե չգրված որենքը: Բայց ընդհանրապես շտաբում կնայեն:

Յերկու հրացանավոր նավաստիներ ձերբակալվածին տարան նավասենյակ:

Գիշերը հրետանավակը ճանապարհ ընկավ նավատորմիդին միանալու:

Սարվինգը նստած եր նավասենյակում, գըլխարկը չեա դրած ծոծրակին, շատ ծխում եր և նորից կարդում եր սպայից վերցրած փաստաթղթերը: Նա լույս չեր վառում: Լուսամուտներից թափանցում եր հյուսիսային մուկ գիշերվա լույսը:

Սարվինգը հուզվում եր: Նա ինքն իրեն հայհոյանքներ եր փնփնթում, փորձում եր կանգնել, բայց նորից եր նստում ճոճաթաթի վրա, և չերկար նայում լճի սպիտակավուն քարտեզին, փորտեղ չերևում ելին ափերի ու խորությունների բարակ, համարյա չնշված գծերը: Հուզմունքն արտահայտելու համար, նրան խոսակից եր հարկավոր: Խոսակից չկար: Բայց չե-

թե լիներ ել, միևնույն ե, Սարվինգն իր մըտքերը չեր կարող արտահայտել, վորովհետև նըրանք վերաբերում ելին բոլորովին գաղանի փաստաթղթերի: Այդ պատճառով Սարվինգը զրուցում եր քարտեզի հետ:

— Գարշելի կոմբինացիա չե ստացվում,— ասում եր նա՝ հաճախ մտասուզվելով:— Ահա չես, Յերչենկոս, հեռավոր նավարկության դեկապետ... Նավարկել եմ չես և՛ Ատլանտյան, և՛ Խաղաղ ովկիանոսում, ծովեզրյա նավագնացների պես չեմ կպել ափերին: Թքած փարոսների վրա: Մենք չերկու շաբաթով փարոսի չերես չելինք տեսնում:

Մանկությունից, հասկանում ես, ուղղակի մանկությունից, չես թելի և ծխախոտի հետ միասին, ներս եմ ծծել հարգանք դեպի իմ զբաղմունքը:

Ծովագնացները լճային ջուր ծեծողները չեն: Ո՞վ ե գտել նոր չերկիրները: Ո՞վ ե նկարագրել ափերը, ուսումնասիրել հոսանքները, վոչնչացել բևեռների մոտ: Մեզ պես մեկը՝ ծովացի ընկերների մոտ: Մեզ պես մեկը՝ Գարվինի գրնացը: Ո՞ւմ շնորհիվ ե գտնված Գարվինի թեորիան: Շնորհիվ ծովագնացների և «Բիզլ» նավի: Յեթե չլինեին նավերը և նավարկու-



թյունները, Դարվինը նստած կլիներ Լոնդոնում վորպես գրադարանապետ, և պինդ լեփած ձվով բուտերբրոդ կուտեր։ Ամբողջ պատմությունը կարված է, ինչպես առաջաստը կարվում է մանիլյան պարանով, ծովագնացների անուններով։ Կոլումբոս, Մագելլան, Կուկ, Լապերուզ, Բերլինգ, Նանսեն և, վերջապես, հենց այդ Շեկլտոնը։

Այո... Շեկլտոնը... Հանդուգն արիություն, բեկռային գիշերներ, գրոհ դահուկներով դեպի հարավային բևեռ։ Մարդը նայում էր մահվան ձակաաին, նայում էր և ծիծաղում։ Լրագրերը գրում էին վեհության մասին... Վոչ, լես չեմ տարակուսում։ Դա իսկական վեհություն էր։ Դեռևս ծովային դպրոցում պատմագետ Շերվինսկին ասում էր մեզ՝ «Ծովագնացներին հատուկ է ուժեղ բնավորություն»։ Այսպես ահա, այդ նույն Շեկլտոնը քչերից մեկն էր... Ինչպես ասենք։ Այ, մի մարդ լերկաթե աչտոսկրներով և կյանքի պաշարով, վոր տասը կապիտանի կբավականանա... Յեվ ահա — փտեց։ Լոնդոնի առևտրականները, սատանայական ծերուկները, կործանվեն նրանք։

Սարվինգը կռացավ սեղանի վրա։ Դժգունած

գիշերը՝ գունատ ջրի նման լույս էր սփռում նավասենյակում։

Յուրա էր։ Ուզում էր գլխով փաթաթվի շինելի մեջ, տաքանա, քնի և լերագում տեսնի հարազատ Ուեստան, տաք ջուրը Բակալեյնի նավահանգստում, արևը, մեխակի թաց փնջերը վոր վաճառում էին փոքրիկ աղջիկները։

Սարվինգը կծկվեց։ Յեթե հարձակվեն անգլիական կործանիչները, գուցե, այսպես ել մեռնեմ առանց քնից կշտանալու։ Նա սկսեց դանդաղ կարդալ։

«Նորին մեծության կառավարության լիազորին»։

Ձեզ անհրաժեշտ է իմանալ, վոր թագավորական նավատորմի նախկին սպա Շեկլտոնը, հուշակված իր արշավանքով դեպի հարավային բևեռը Հյուսիսային շրջանի նահանգապետ գեներալ Միլլերի հետ համաձայնություն է կայացրել, կոնցեսիայով հանձնելու անգլիական բաժնետիրական ընկերությանը, հիշյալ Շեկլտոնի նախագահությամբ, Կոլայի թերակղզու բոլոր հարստությունները։ Ընկերությունն ունի լերկու միլիոն ֆունտ տերլինգ կապիտալ։ Նա կազմված է լավագույն գործարար և ֆինանսական վարկ



ունեցող անգլիացիներին: Կոնցեսիան կազմվում  
է 99 տարով:

Շեկլտոնի ընկերութիւնն ստանում է Մուր-  
մանի շրջանը բոլոր հանքերով, յերկաթգիծը  
Մուրմանսկից մինչև Սորոկա, իրավունք ան-  
սահման քանակութեամբ փայտ դուրս բերելու,  
փայտասղոցարաններ, գործարաններ և ճանա-  
պարհներ կառուցելու, ձուկ բռնելու և առհա-  
հասարակ ամեն կերպ ոգտագործելու ուսուս-  
կան հյուսը մեծբրիտանական կապիտալի զար-  
գացման համար»:

Գեներալ Միլլերը փոխարենն ստանում է  
պարենի և զգեստավորման խոշոր տրանսպորտ:  
Կհայթայթվեն նույնպես այլ առարկաներ, վո-  
րոնք անհրաժեշտ են ուսական կամավորական  
բանակի հաջող գործողութիւնների համար:

— Այլ առարկաներ: Մարվինգը ժպտաց:

«Ընկերութեան զիրեկտոր-տնօրեն Շեկլտոնը  
յեկավ Մուրմանսկ աշխատանքի:

Ձեզ անհրաժեշտ է ուս սպաների կազմա-  
կերպութեան մեջ պահպանել վստահութիւն (հիմ-  
նը մեծ գործի իսկական շրջութեան վրա), վոր անգ-  
լիացի արդիւնաբերողների աշխատանքը հյուս-

սիսում, վոչ միայն կթեթեացնի կռիվը բոլ-  
շևիկների դեմ ռազմաճակատում, բայց և  
կկարգավորի կամավորական բանակի թիկունքը,  
վորը, ինչպես ձեզ հայտնի պիտի լինի, ունի  
անկարգութեան և անարխիայի գծեր:

Հաղորդում եմ ձեզ ի գիտութիւն, վոր նորին  
մեծութեան նավատորմիղը Հյուսիսային Դվինա  
գետի վրա լրացավ գետային տիպի զրահավոր  
հրետային »Ումբեր« նավակով, յեկած Բրազի-  
լիայից, և յերեք համարագրված զրահանավերով»:

Առավոտյան հրետանավը մոտենում եր խեղ  
կղզուն: Գնում ելին ուղիղ ափի մոտով: Արևը  
ջրի մեջ շողշողում եր ուռուցիկ հայելու պես:  
Բուրում եր ուռենու տաք տերեւներէ հոտ:

Բաքից ծիծաղի ձայն եր գալիս: Ավագ նա-  
վաստի Միրոնովը պատմեց նավաստիներին, թե՛  
ինչպես անգլիական գետային »Ումբեր« հրետա-  
նավը, Ամազոնի վրա նավարկելիս, խճճվել եր  
ջրային շուշանների մեջ և կորցրել պտուտակը:

Կղզու մյուս կողմը յերևաց նավատորմիղը:  
Պահապան կատերից սանրերով նվազեցին կա-  
տաղի քայլերգը — սովորական վողջույնը «Մուզի-  
կանտին»: Միրոնովը բռնեց քով սպառնաց ծաղ-  
րողներին:



Սարվինգը սեմաֆորեց տորմապետական նա-  
վին՝ «Նավի վրա ունեմ գերի, սպիտակ սպա  
գաղտնի փաստաթղթերով»:

Տորմապետական նավից մակուկ մեկնեց:  
Թիավարների թիերից շուրը ցայտում եր սըն-  
դիկի ծանը կաթիլներով: Անագե սաղմոնները  
դուրս ելին թռչում ջրից՝ շրջապատված ջրի կա-  
թիլներով և արևի գունատ ծիածանով:

Տրեները մինչև աշուն մնաց պառկած Պետ-  
րոզավոդսկու հիվանդանոցում: Ձեռքը չերկար  
ժամանակ չեր լավանում: Սկսվել եր խոր թարա-  
խակալում — վերքի մեջ շինելի մահուդի կտոր  
եր ընկել:

Ոգոստոսի սկզբին ձեռքը լավացավ: Տրե-  
ներն ուզում եր դուրս գրվի, բայց հիվանդա-  
ցավ բժավոր տիֆով:

Տրեների հետ միասին պառկած եր «Մուզի-  
կանտի» ազդանշանորդ Ֆեոդոր Գուշչինը՝ վի-  
րավորված վոտքից:

Ճակատագիրը կարծես դիտմամբ հանդիպեց-  
նում եր Տրեներին Գուշչինի հետ: Յերկուսն  
ել վիրավորվել ելին նույն ճակատամարտում  
Վիդլիցի տակ, միևնույն ուրը հիվանդացան բը-  
ծավոր տիֆով, և միասին դուրս չեկան հիվան-  
դանոցից:

Գուշչինը ցածրահասակ նավաստի չեր, կկո-  
ցած աչքերով: Հիվանդանոցում նա ծալը աստի-  
ճան տարված եր Պուշկինի հատորի ընթերցա-  
նությամբ:

Ամեն անգամ, գիրքը հետ դնելով, Գուշչինն  
ասում եր՝



— Վերջնականապես լաջն ե:

— Ինչո՞վ ե քեզ դուր գալիս Պուշկինը, Ֆեդ-  
յա, — հարցնում եր Տրեները:

— Մարդու հոգի չե այրում, Եգուարդ Պետ-  
րովիչ:

Գուշկինի հոգին միայն Պուշկինից չեք այր-  
վում: Նա այրվում եր և՛ հիշողութուններից,  
և՛ կիզող ցավից: Գուշկինը չեք կարողանում մո-  
ռանալ Կրոնշտադտի Յակոբին հրապարակի կա-  
տաղի միտինգները, անձրևային գիշերը, չեք  
պահակ եր Սմոլնու մոտ, և «Ավրորայի» կատաղի  
թնդանոթների գոռոցը, վոր կրակում եր Զմե-  
ռային պալատի վրա:

Խարուկների բոցը և արձակած արկերի փայ-  
լը մառախուղի մեջ, — այսպես ելին մնացել նրա  
հիշողության մեջ Հոկտեմբերի առաջին որերը:  
Նրանք նմանվում եյին Բալտյան ալիքների զո-  
վության: Այնտեղից չեք անցնում աղջուսային  
կարմրութունը: Բաճկոնի կոճակները շարու-  
նակ բաց ելին: Սիրտը սառչում եր հուզմունքից.  
— Թվում եր՝ չեղած հեղափոխության քամին  
փչում եր ուղղակի սրտի մեջ:

Հոգին նորերս ցավից սկսել եր այրվել, Գուշ-  
կինը շնչում եր առաստաղին «վերջնականա-

պես դարձելի չեն», և Տրեներից շուռ եր գալիս  
դեպի պատը:

Նա կապիտանից ծածկում եր սարսափելի  
նորությունը — № 2 հրետանավակը և պահպանա-  
կան նավ «Բայանը» Տոլվուչի մոտ դուրս են նետ-  
վել քարերի վրա՝ անգլիական կործանիչների և  
հիդրոպլանների հետ ունեցած ճակատամարտից  
հետո:

Ոգոստոսի առաջին որերին, կործանիչները  
հարձակվեցին հրետանավակի և «Բայանի» վրա,  
վոր դեռ քի ելին կանգնած Սալ լճի մոտ:  
Կործանիչները սլանում ելին չլսված արագու-  
թյամբ: Նրանք զարգացնում եյին վաթսուն  
հանգուցյ մի ժամում, իսկ մեր հրետանավակ-  
ները հազիվ ձգում ելին տասնչորս հանգուց:

Կործանիչները պտտվում ելին ոճաճուկի  
պես, ճեղքում ջուրը, և ոգտվելով շարժընթացի  
առավելութունով՝ ազատվում ելին կրակոցներից:  
Հիդրոնները, ցածրանալով մինչև ջուրը, ռումբեր  
եյին տեղում մեր նավերի վրա:

Յեքը հրետանավակի և «Բայանի» թնդա-  
նոթները շիկացան և հրաժարվեցին կրակելուց,  
չերկու նալն ել՝ կիսախորասուզված և շոգիով  
պատած, դուրս նետվեցին քարերի վրա: Զորա-



խումբն ազատվեց լողալով: Հիդրոնները լողացողներին գնդակահարում էին գնդացիներին:

№ 6 հրետանավակը մինչև վերջին րոպեն հետ եր վանում կործանիչների հարձակումները, իրենով պաշտպանելով վիրավոր նավերը: Բոլոր արկերը կրակելուց հետո, նա գնաց դեպի հարավ, հրացաններով պաշտպանվելով անգլիացիներին, վոր վրա էլին տալիս վորսորդական շներին վոհմակի պես:

Գուլշինը վախենում եր այդ մասին պատմել Տրեններին, — կապիտանը դեռ թույլ եր:

— Ախոս, — շշնշում եր Գուլշինը, — Եհ, վոշինչ, հաշիվ կտեսնենք:

Հաշիվ տեսնվեց միայն ուշ աշնանը, լերք Տրեններն ու Գուլշինը վերադարձան նավատորմիդը:

Հոկտեմբերի առաջին թվերին նավատորմիդը դուրս լեկավ դեպի Տուրվուլ:

Տուրվուլի մոտ, Մեզ կղզու վրա, սպիտակները դրել էին ուժեղ նավալին թնդանոթներ: Կղզին փակում եր Պովենեցկի ծոցի մուտքը:

Հրաման ստացվեց վոչնչացնել հակառակորդի Մեզ կղզու մարտկոցները, վոչնչացնել սպիտակ նավատորմիդը, և դեսանտ հանել սպիտակներին թիկունքին՝ Մեզվեթի սարի վրա:

Մուսլ աշունը անձրև եր մաղում լճի վրա: Հրդեհված անտառները պատեցին ամիերը գորշ ծխով:

Տուրվուլում Տրեններն ու Գուլշինը գնացին «Կաֆե կալդունչիկ» Կուզմինիշնայի մոտ: Պառավը ճանաչեց կապիտանին, ուրախացավ և նորից կերակրեց նրան մածունով: Ուսուցչուհուն Տրենները չպատահեց: Նա գնացել եր Պետրոգավոգսկ, և Կուզմինիշնան մինչև անգամ չգիտեր նրա հասցեն:

Կուզմինիշնայի մոտից գնացին անտառ ման գալու: Յերեկոն մոտենում եր: Մառախուղի միջով թափվում էին դեղին տերևները:

Գուլշինը պոկեց փոնչու թաց ճյուղը և ասաց մտախոհ՝

— «Միրում եմ լես ճոխ թառամումը բնութլան»:

Հիվանդանոցից հետո նա հաճախ տեղի անտեղի մտաբերում եր պուշկինյան վոտանավորները:

— Այստեղ գտա լես նրան — ուսուցչուհուն, — նա ցույց տվեց Տրեններին կածանը: — Բանի հիշում եմ՝ սիրտս ալրվում ե:

Նրանք հրետանավակ վերադարձան մութով: Աստղերը լճի մեջ արտացոլում էին, վորպես



փայլատ ապակու մեջ: Անտառները տերևաթափ  
ելին լինում: Տրեների ականջների մեջ դեռևս  
հնչում եր չոր տերևների խշխշոցը, վերջին թըռ-  
չունների սուրոցը: Անհավատալի լեր թվում, վոր  
վաղը ճակատամարտ ե, վոր մոտիկ շրջում են  
սպիտակների կործանիչները և վոր, ահա, այս  
նրբափողոցում, լեյտենանտ Շերվուդը ձեռնա-  
նունակը նետեց լերկու տարեկան աղջկա վրա:

Յերեկոյան աստղ, տխուր աստղ,

Գո շողն արծաթեց դաշտերը թառամած,

հանդիսավոր կերպով ասաց Գուլշինը և ծիծաղեց:

Նա ուրախանում եր, վոր վաղը ճակատամարտ  
ե, և նա անկասկած կընդունի հրամանատարի  
ազդանշանը՝ պառկել Մեզ կղզու փակոցափեղկին  
և կրակ բանալ համազարկերով: Նավաստիները  
նորից նրան անվանում են «Ապխտած աչք», ինչ-  
պես ընդունված ե զայրացնել ազդանշանորդին:  
Բայց նույնիսկ այդ ուրախացնում եր Գուլշինին:

Տրեներն արթնացավ դեռ լուսաբացից առաջ:  
Նավասենյակի միջնորմի հետևին անձրևը թըմբ-  
կահարում եր տախտակամածի վրա:

Տրեները փաթաթվեց խոնավ շինելի մեջ:  
Նա դողում եր: Ձնքեռի միջով դժվարությամբ  
ներս եր ծծվում ջրցելս առավոտը: Արևելքում

փռված եր վարդագույն կեղտոտ պղտորություն:  
Սա վատ չեղանակ եր նախագուշակում:

Գուլշինը չսխալվեց: Տորմապետական նավից  
հրաման ստացվեց պառկել Մեզ կղզու փակո-  
ցափեղկին: Առավոտյան ժամի տասին մոտ, լե-  
րաց ցածր կղզին: Հորիզոնի վարդագույն լույսը  
մարեց: Նավերի առջևում վազում ելին անվերջ  
ալիքները: Սկսվեց որորումը: Չափապարան-  
ները փոքրանում ելին, բայց կղզին լուռ եր:  
Ազդանշանի կայմի վրա հեռադիտակով լերևում  
եր լեռագույն դրոշակը:

Նավերի վրա սկսեց հնչել մարտադրական:

Կղզու վրա բոցավառվեց վեց դեղին կրակ:  
Մռայլ դղրդոցը ցնցեց ողբ: Անձրևը վարարեց:

Նավատորմիղը պատասխանեց հաճախակի կը-  
րակով: Նավերը մանևրում ելին, բռնելով դա-  
նազան ընթացք:

— «Ծիրանի ծուխը քուլա-քուլա լերկինք ե  
բարձրանում», — բարձր ասաց Գուլշինը: Կրակում  
են վեց թնդանոթից: Հրաշալի լե: Սակայն նը-  
րանց փրկություն չկա:

Ամեն ինչ անհրապույր եր, — և՛ լերկինքը, և՛  
լիճը, և՛ մթին հեռունները, և՛ ցածր կղզին: Մի-  
այն թնդանոթների դեղին բռնկումները պատ-



ռում ելին ծուխը: Այդ բռնկումները Տրեներին տոնական ելին թվում:

Տրեներն անակնկալ կերպով զգաց լերեխա-  
ջական ուրախության հորդում: Անհասկանալի  
վստահութունը՝ վոր և՛ իրեն, և՛ Մարտաչե-  
նին, և՛ ամբողջ նավատորմիդին սպասում է ան-  
սովոր բախտավորութուն, հարկադրեց նրան  
ծիծաղել: Այսպիսի զգացում նա լերբեմն  
ունեցել է կյանքում և լերբեք չի խաբվել: Գուշ-  
չինը զարմանքով նայեց ծիծաղող հրամանատա-  
րին, մարտական տղա չե, թեպետ և հեքիաթասեր  
է ու տուրորինակ:

Տրեները հրետանավակը շրջեց կողքի և հա-  
մազարկ տվեց կղզուն, վոր ծխում էր պայթյուն-  
ներից և անձրևից:

Անսպասելի կերպով մառախուղ իջավ: Թըն-  
դունների կրակը հազիվ էր ճեղքում նրա քողը  
կղզու վրա: Տրեները գրգռված նայեց ժամացույ-  
ցին, — ընդամենը առավոտյան ժամի ութն է,  
բայց սպավորութունն այնպես է, կարծես գի-  
շեր է իջնում լճի վրա:

Ճակատամարտն արագ հանդարտվում էր:  
Կղզին հարվեց մառախուղի մեջ: Անձրևը միալար  
շառաչում էր նավերի տախտակամածների վրա:

Կղզուն ավելի մոտենալ անկարելի չեր, — սպի-  
տակներն ավերին մոտ ականներ ելին դրել:

— Այ քեզ գարշելի տեղեր, — բարկացավ  
Տրեները:

Տորմապետական նավից հրաման տվին դա-  
դարեցնել կրակը և քաշվել դեպի Կուզարդ:  
Պետք էր խնայել արկերը և լրացնել փայտի պա-  
շարը:

Հետևյալ որը առավոտյան նավատորմիդը նո-  
րից մոտեցավ կղզուն, և խիստ ու արագ կրակ  
բաց արեց:

Սկզբում կղզին պատասխանում էր բոլոր թըն-  
դանոթներից, հետո սկսեց պատասխանել ավե-  
լի և ավելի սակավ, որհասի մեջ գանվող գա-  
ղանի նման: Կղզու վրա հրգեհ առաջացավ:

Հանկարծ Տրեները հայնոեց և սուլեց, մի  
բան, վոր ճակատամարտի ժամանակ համարվում  
է ծայրահեղ անտակտութուն: Բայց պատահածն  
իրոք վոր արտասովոր էր: Սպիտակների ար-  
կերն ընկնում էին հենց կղզու առաջ, այնտեղ,  
վորտեղ նավեր չկային: Սպիտակները խփում  
էին զուտ ջրին:

— Նրանք խենթացել են, — գոչեց Գուշչինը:  
Այլաք հրետավորը ուսերը թոթվեց:



Զվարճալի չե, — ասաց Մարտաչեններ, և աչքերով ցույց տվեց արկերի ճղվուռնը, վոր բարձրանում եր հեռվում նավատորմիղի հետևին: Սպիտակները կրակում ելին շտապ և անշնորհք: Ի՜նչ ե կատարվում: Սա ի՜նչ ողետուն ե:

— Կամ համատարած խելացնորութուն ե, — լենթադրեց հրետավորը, — կամ հեռաչափերը փրշացել են:

Կարելի չեր կարծել, վոր կղզու թնդանոթներն ընկել են լերեխաների ձեռքը, և նրանք՝ զընդակահարելով առափնյա ժայռերը, զվարճանում են: Մի ժայռ քարե կարկուտի պես ողը թռավ:

Տրեններն ասես կշտամբելով պտտեց գլուխը: Նավատորմիղի նավերն աստիճանաբար դադարեցրին կրակը:

Տորմապետական նավից թխթխկաց ռադիոն: Հրամանատարը կղզուն առաջարկում եր անձնատուր լինել՝ ավելորդ արջունհեղութունից խուսափելու համար:

Մի բոպելից հետո, կղզում անփնաս ֆնացած ազդակայմի վրա, բարձրացավ կարմիր դրոշակ: «Ուռա» անցավ նավատորմիղի նավերի վրայով, և հեռու գոռոցն արձագանքեց անտառոտ ափերին: Զուրը ցնցվեց:

Նավապետական նավը կղզուց ռադիո ընդունեց՝ «մի կրակեք»: Մեզ կղզին անձնատուր չեղավ:

Հրամանատարը կայազորին հրամայեց ուղարկել պատգամավորութուն և թնդանոթների փականքները: Կղզին չպատասխանեց: Նա անձնատուր չեղավ, բայց կայազորի վարմունքը կապածելի յեր թվում, թեև կղզու վրա թնդանոթները լուռ ելին:

Սպասում ելին սմբողջ ուր: Միայն լերեկության դեմ կղզուց մեկնեց մի մակույկ: Նավատորմիղի նավերի վրա տիրեց խորին խաղաղութուն, կարծես բոլորը պահել ելին շունչը, հուսալով լսել պատգամավորների խոսակցութունը հրամանատարի հետ:

Պատգամավորները բարձրացան նավապետական նավի տախտակամածը: Առջևից գնում եր մի ջահել անդեն սպա, ուսադիրները պոկած: Նա հրամանատարին պատիվ տվեց:

Կղզու կայազորը բարոյալքված ե, — ասաց նա բարձր և կերկերող ձայնով: — Մարդկանց մի մասը սպաների հետ միասին փախել ե ափ, մի մասը հարբած ե: Մյուսներն անձնատուր են լինում:



—Ինչո՞ւ դուք չպատասխանեցիք մեր ռա-  
դիոգրին՝ պատգամավորությունն ուղարկելու  
մասին:

—Ձեր վերջին արկը ջարդեց ռադիոկայանը:  
Մենք բերել ենք գնդացիները և ծածկագրերը:

—Ինչո՞վ բացատրել ձեր անձնատուր լինելը:  
Ձե՞ վոր կղզին լավ է ամրացրած:

Սպան կարմրեց:

—Ոտարերկրացիները գնացին: Մենք մենակ  
մնացինք, և հետո... անհույս գործ եր:

Հրամանատարը ժպտաց: Նա հիշեց առավոտ-  
վա խելացնոր հրաձգությունը:

—Ինչո՞ւ դուք այդպիսի տարորինակ, յեթե  
ավելին չասենք, կրակ ելիք բաց արել:

—Հրանոթի սպասավորները հարբած էին:

Նավաստիները կանգնած էին մի քիչ հեռու:

Սպան հետ նայեց, գունատվեց և մի քայլ հետ  
գնաց: Նա սպասում էր, վոր կողքերից կբուսնեն  
ուղեկցորդները՝ հագցրած ավիաներով, բայց հրա-  
մանատարը հրամայեց տանել պատգամավորնե-  
րին ընդհանուր նավասենյակը և թեյ խմացնել:

—Յես շատ խնդրում եմ, — ասաց սպան ավե-  
լի հաստատուն ձայնով, — ըստ հնարավորության  
չգնդակահարել մեզ, այլ ոգտագործել իբրև մար-  
տիկներ: Ոտարերկրացիները տանջում են մեզ՝

հյուսիսային կամավորական բանակի սպաներին  
և զինվորներին, վորպես շների: Այս անտանելի  
յե: Լեյտենանտ Սմոլլը կազմակերպում է գյու-  
ղացիների մասսայական ծեծ: Ծովապետ Կետ-  
լինսկին Մուրմանսկում սպանված է աֆս պատ-  
ճառով, վոր դիմադրում էր ինտերվենցիային:  
Ճառով, վոր դիմադրում էր ինտերվենցիային:  
Թիկունքում թալան, հարբեցողութուն և ընչա-  
սիրութուն է տիրում:

—Հնարավորության դեպքում մենք ձեզ չենք  
գնդակահարել, — հրամանատարը նորից ժպտաց:

— Դուք յերևի նախկին ուսանող եք:

— Այո:

Ընդհանուր նավասենյակում սպան ագահու-  
թյամբ թեյ էր խմում, և նրա աչքերում արտա-  
սուք էր փայլում: Նա դեռ շատ ջահել էր: Ար-  
տասունքները նա կուլ էր տալիս հեղուկ թեյի  
և պաքսիմատի հետ:

— Բոլորովին ջահել ե, — ասաց հրամանա-  
տարը նավատորմիղի կոմիսարին: — Դրա համար  
դժվար է առանց մալրիկի, վախ, դժվար է:

Պատգամավորները հաղորդեցին, վոր կղզու  
շուրջը դրված է ափանների գոտի:

Ամբողջ գիշերը դեպի Մեդ խարխալելով մո-  
տենում էին մակույկներ նավատորմիղի նավե-



րից: Առավոտյան կղզի դուրս բերվեց նավորդնե-  
րի զորախումբ: Սա ձեռք գցեց ութ թնդանոթ  
և զգեստների ու պարենի հարուստ պաշար:

Նավատորմիղի նավերի շուրջը լողում էին  
անգլիական կորնբեիֆի և ֆրանսիական ադած  
մսի բացած բանկաներ:

Տաքացավ:

Յերկնքի կեսը ծածկվեց կարմիր ծխով, — ամ-  
պերի հետևին մայր եր մտնում արևը:

Տրեներն ամբողջ կրծքով ող ներշնչեց, նա  
մի անգամից կուշ տվեց տասնյակ թարմ բուր-  
մունքներ՝ Ոսեգայի ջրի, ձկան, աշնան, խե-  
ժոտ տախտակամածի, և կեչու ծխի՝ նավային  
խողովակները:

Յերկրորդ հաղթությունը նա զգաց վորպես  
հանգիստ:

Ազդանշանորդ Գուշչինի մահվան մանրա-  
մասնություններն անցնում էին բերնբերան, և  
նավատորմիղի Մեդվեժիկ սարից Պետրոզավոդսկ  
տեղափոխվելու ժամանակ՝ առասպելի բնավո-  
րություն ստացան: Իսկապես այդ մահը քաղա-  
քացիական պատերազմի համար միանգամայն  
սովորական էր:

Պաշտոնական զեկուցագիրը հաղորդում է  
հետևյալը:

«Նոյեմբերի հինգի գիշերը նավատորմիղը-  
Տոլվուկից դուրս լեկավ գեպի Մեդվեժիկ սարը՝  
սպիտակների թիկունքում դեսանտ հանելու հա-  
մար»

Աժենակու փարոսի մոտերքում, նավատորմի-  
ղի նավերին միացան փոխադրանավեր կարմիր  
բանակայինների զորաբաժնով: Չնայելով ուժեղ  
սառնամանիքին՝ մարտիկների կեսը շինել չունեի:

Լիակատար մթության մեջ, մարած ճրագ-  
ներով, նավատորմիղը դանդաղ ընթացքով շարժ-  
վում էր ափի լերկարությամբ, վորպեսզի չդիպ-  
չի ալանների, վոր դրել էին սպիտակները մի  
քիչ հեռու ափի դոտուց:

Թշնամուց չնկատված՝ նավատորմիղը հասավ  
կրեստովի Նավոլսկ հրվանդանին, և սկսեց դե-



սանտ հանել: Այնպիսի թաց և թանձր ձյուն չեկավ, վոր կամրջակից առաջացուկը չեր լեռնում: Դեսանտը հանում ելին մակուկներով՝ մթության և բուքի մեջ:

Փոխադրանավերի ափին մոտենալու ժամանակ թշնամու դետքը նրանց հայտնաբերեց: Հրացանները մի քանի համադարկ տալով՝ դետքը հետ քաշվեց:

Ի՞նչ հետո սպիտակների նավատորմիդը փոթորկալին հրետանային կրակ բաց արեց Պերգուբից, վորը գտնվում է Կրեստովի նավուկից մի մղոն հեռավորության վրա: Արկերը մեզ չեյին շփաչում: Սպիտակները կամ բոլորովին չգիտեցին մեր նավատորմիդի տեղը, կամ մթության մեջ չեյին կարողանում կողմնորոշել, վորովհետև մեր լուսթյամբ մենք թշնամուն հնարավորություն չեյինք տալիս վորոշելու մեր տեղադրությունը:

Կես ժամվա հրաձգությունից հետո, սպիտակ նավատորմիդի տեղադրված վայրում մի քանի ուժեղ պայթյուններ առաջացան:

Լուսադեմին դեսանտի ափհանումը վերջացավ: Դեսանտը կտրեց Մեզվեժի սար—Լյու-

բըսիի ավազ կոչվող խճուղային ճանապարհը և գրավեց սպիտակների գումակը:

Առավոտյան սառնամանիքը սաստկացավ և քամին ուժեղ ալեկոծություն առաջացրեց: Նավատորմիդն սկսեց Մեզվեժի սարի գնդակոծումը: Մեր կրակին պատասխանում եր թշնամու զրահապատ գնացքը:

Ցերեկը Մեզվեժի սարի գնդակոծումն սկսվեց և գյուղում մեծ հրդեհ առաջացրեց:

Ցերեկոյան դեմ դեսանտի զորաբաժնի հրամանատարից գրություն ստացվեց: Նա հալորդում եր, վոր սպիտակներն ոգնություն ստացան, արշավում են յերկու կողմից, և քանի ուշ չե, պետք է նավերը տրամադրել դեսանտը հետ ընդունելու համար:

Դեսանտը վերցրին խափանիչ նավերը, և նավատորմիդը հեռացավ դեպի հարավ:

Դեսանտը չեր կարող հարձակում գործել բուքի պատճառով, ինչպես նաև քաղցի և մարտիկների ծայր աստիճան հոգնածության՝ նախընթաց անընդհատ ճակատամարտերից:

Դեսանտային զործողության ժամանակ կուրան տասնվեց մարտիկներ, սրանց թվում Ունեգայի նավատորմիդի ազդանշանորդ Ֆեոդոր



Գուշչինը, վոր կամավոր կերպով մտել եր դե-  
սանտի զորաբաժնի շարքերը»:

Զեկուցագրից վոչ մի կերպ չի կարելի  
յեզրակացնել, վոր դեսանտային գործողու-  
թյունը Մեդվեժիյ սարի տակ ծանր հարված ե  
հասցրել սպիտակներին:

Զեկուցագրի մեջ չկա վոչ մի բառ գիշե-  
րային խուճապի մասին Պերգուբում, ինչպես և  
չկա ազդանշանորդ Գուշչինի մահվան մանրա-  
մասնությունները:

Զեկուցագրում ասված ե, վոր սպիտակները  
դետքը մի քանի հրացանային համազարկ տալով  
փոխադրանավերին՝ արագությամբ հետ քաշվեց:

Դետքը հաղորդեց Պերգուբա սպիտակ նա-  
վատորմիդի նավերին, վոր Կրեստովի Նավոլոկ  
հրվանդանին բազմաթիվ շոգենավեր են մոտեցել:  
Գիշերը և բորանը մեծացրել ելին նշանց քա-  
նակությունը: Դիտակալների ասելով, շոգենա-  
վերը լիքն ելին մարդկանցով, և տախտակա-  
մածների վրա ձիեր ելին խրխնջում, — ինչպես  
յերևում ե սպիտակների հեծելազորը թիկուն-  
քում ափ եր իջնում:

Սպիտակ նավատորմիդը, վոր խարխա գցած  
կանգնած եր, փոթորկային կրակ բաց արեց:

Յփում ելին կուրորեն, մթությանը, սպասելով  
թե՝ լերը կպատասխանեն կարմիրները, վորպես-  
զի կրակոցների բռնկումներից վորոշեն դեսան-  
տի ափ դուրս գալու տեղը: Բայց կարմիրները  
համառորեն լուռ ելին:

Թաց ձյունը գունդ-գունդ ծեփում եր նշա-  
նառուների դեմքերը: Սարսափելի գիշերն ողա-  
կի պես խեղդում եր ամեն կողմից:

Սպիտակ նավատորմիդի հրամանատարը տա-  
ռապում եր ասթմայով: Նա կանգնած եր կա-  
մըրջակի վրա, հուզմունքից խեղդվում եր, հաբ-  
վածում եր բռնացքներով բռնակներին և ճչում՝  
— Պատասխանեցեք ելի, գրողը տանի ձեզ,  
պատասխանեցեք:

Մեկ-մեկ հրամանատարին թվում եր, վոր  
դետքը խառնաշփոթել ե, վոչ մի բուշեիկ չկա, և  
սպիտակ նավատորմիդը դատարկ տեղի լե խը-  
փում: Բայց հենց իսկույն ամբողջ ելությամբ  
զգում եր կարմիր հրետանավակների գաղտագո-  
ղի ընթացքը, վոր փակել ելին նրան Պերգուբում:

— Ինչպե՞ս անցան նրանք ականների վրա-  
յից, — հարցնում եր նա ոգնակահին: Չսպասե-  
լով պատասխանի, նա հափշտակում եր հեռա-  
դիտակը և ձեռքերը դողալով, վորոնում եր պալ-



թուլանները: Նա սկզբում վոչինչ չէր տեսնում, բացի անթափանցելի սև ջրից, վոր հեղեղել էր լիճը: Հետո հեռադիտակի լախն շրջանը շառագունում էր պղտոր լույսով, վեր ելին թռչում թռի շատրվաններ և թանձր խավարը նորից ծեփում էր աչքերը:

— Հակառակորդը լուռ է: Հարկադրեցեք նրան պատասխանել, — ճշում էր նա ոգնականին և ջղածգումով բաց էր անում շինելի կոճակները: Կրծքի հեղձուկը ծծում էր նրա սիրտը, մերթ կծելով նրան ամուր բերանով, մերթ բաց թողնելով: Հրամանատարը գիտեր, վոր այս նրա վերջին գիշերն է լերկրի վրա:

— Գուցե այնտեղ վոչ վոճ չկա:

Ոգնականն ուսերը վեր քաշեց:

— Կա, ականջ դրեք:

Հրամանատարը դադարեց կամրջակի վրա ման գալուց: Լյուբսկի ավազների կողմից պարզ վորոտում ելին թնդանոթները: Հրամանատարը ճանաչեց սպիտակ զրահապատ գնացքի կրակը:

Ի՞նչը կարող է լինել ավելի սարսափելի, քան թշնամին, վորն առանց մի կրակոցի առնում է ձեզ ողակի մեջ ալսպիսի սարսափելի գիշերը: Խճուղով սլանում ելին գումակները:

Խուճապ սկսվեց: Հրացանալին հապճեպ կրակոցները ճեղքում ելին մթուժյունը: Յերկաթ-գծի կողմից ծանր և դանդաղ հարվածի ձայն լսվեց:

— Կարմիրները թիկունքն ելին անցնում: Կամուրջը պաթեցրին, — բղավեց մթուժյան մեջ մի խզված ձայն:

Զրահապատ գնացքը լռեց: Սպիտակների ցամաքալին մարտկոցը կրակում էր հերթով: Թընդուկների բռնկումները լուսավորում ելին, ջրիկ ձյունով ծածկված, սև տախտակամածները, մռայլ ափերը, գորշ ձյունը՝ վորը սրընթաց մառախուղի պես թռչում էր անտառների վրա, յով:

Սպիտակ նավատորմիղի նավերը կրակում ելին անկարգ, մերթ հանդարտվելով, մերթ հանկարծ միանգամից՝ մեկը մյուսի առաջն կնկնելով:

— Հիստերիկա, — շշնջաց հրամանատարի ոգնականը և ցնցվեց բակից լեկող վախասուռնից՝ — Նավերը ձախ նավեզրին: Նավերը:

— Հրթիռ տվեք, — հրամայեց հրամանատարը: Այժմ ամեն ինչ պարզ էր. կարմիր հրետանա-



վակները փակել ելին նրան մահացու փոսում,  
դցել ելին ծուղակը, դիվային թակարդը:

Հրթիռը սուլեց և վառվեց հիվանդ կապտա-  
գույն լույսով:

— Ահա, ահա, — գոչեց հրամանատարը և  
ցույց տվեց դեպի լիճը, վորտեղ սև ջրի և փո-  
թորկի մեջ, կողքից կողք որորվելով, մինչև  
կայները ձյունով ծեփած, սլանում եր հրետա-  
նավակը՝ կարմիր դրոշակը կայմաձողին:

Հրամանատարը բռնեց կոկորդը: Ծակող  
ցավը կծեց նրա ալոսիկները: Թվում եր թե՛  
նրանք ճաքում և տրաքվում են մասերի: Պարզ  
լավում եր մեքենաների դրդոցը և շոգու ուժ-  
գին խռիռոցը, վոր դուրս եր թռչում ականա-  
նավերի խողովակներից:

— «Ուսսուրիյեց» — շնչաց հրամանատարը:  
— Վորտեղից. ինչպես ե նա անցել Ոսեդա  
լիճը Բալթիականից: Պալթեցնել նավատորմի-  
ղը:

Ականանավը վրա պրծավ, վորպես սպիտակ  
մրրիկ: Յերկինքը լերերաց: Թագանոթների վորո-  
տը փուլ լեկավ թաց տախտակամածների վրա:

Հրամանատարն ընկավ: Ոգնականը բռնեց  
նրա ուսերից, — նա մեռած եր: Հրթիռը մարեց:

Ոգնականը կամրջակից ցած վազեց: Տորմա-  
պետական նավից թարթեց՝ գիշերային ալե-  
կոծման մեջ խղճուկ լույսի ազդանշանը՝ պալ-  
թեցնել սպիտակ նավատորմիդի նավերը, իսկ  
զորամասերը թող հետիոտն հետ նահանջեն դե-  
պի Մեդվեժիյ սարը:

Ականանավ կար, թե՛ չկար — հրամանատարի  
ոգնականը չգիտեր: Նա նավատորմիդը պալթեց-  
նելու հրաման տվեց այն պարզ զգացումով,  
վոր ամեն ինչ կորած ե:

Տասն ռուպելից հետո պալթյունների հար-  
վածները մի ռուպե կանգնեցրին բուքը: Ձյունն  
սկսեց դանդաղ գալ:

Այս դեպքի մասին, վերը բերած զեկուցա-  
գրի մեջ խուլ կերպով ասված ե. «Կես ժամյա  
հրաձգությունից հետո, սպիտակ նավատորմիդի  
տեղադրության շրջանում առաջացան մի քանի  
ուժեղ պալթյուններ»:

Լուսաբացին սպիտակ նավորդների ցաքու-  
ցրիվ զորամասերը հետ ելին գնում դեպի Մեդ-  
վեժիյ սարը: Կապարե քամին ծակող բանջար-  
բառկ եր բերում: Այնտեղ, վորտեղ քիչ առաջ  
կանգնած եր նավատորմիդը՝ թափառում եր  
սառցային ալիքը:



Նահանջողները կանգ առան — ծանր համա-  
զարկը թափ տվեց ձյունը սոճիներից: Կարմիր  
նավատորմիղը վերջապես կրակ բաց արեց:  
Թնդանոթները քրթմնջում էլին վստահ և առանց  
շտապելու: Գիշերային վախը վաղուց անցել էր:  
Պարզվեց, վոր վոչ մի ալանանավ չի լեզել:

Մուրմանի գիմնազիստները նավատորմական  
շինեղներով, ալդ ամբողջ տարորինակ խուժանը,  
վոր կազմում էր սպիտակ նավատորմիղի զորա-  
խումբը, գլխիկոր քարշ էլին գալիս ափի լեռ-  
կանությամբ դեպի հյուսիս, վորտեղ բարձրա-  
նում էր հսկայական հրդեհի ծուխը: Այրվում  
էր Մեդվեժիլ սարը:

\*  
\*\*

Ֆեոդոր Գուշչինը մեռավ լուսաբացին՝ դե-  
սանտ հանելու լեռկորդ սրը: Նա հեռացավ  
նավից մարտիկների զորամասի հետ:

Գուշչինը գիտեր, վոր նրա վարմունքը կը-  
համարեն դասալքութուն, բայց նրան մահու  
չափ ձանձրացրել էլին անճոռնի շոգենավերը,  
ձանձրացրել էլին ճակատամարտերը, վորտեղ  
թշնամուն չես տեսնում, ձանձրացրել էր սառը  
և անհանգիստ լիճը, ձանձրացրել էր, վերջա-

պես, ալաններ բռնելը՝ կատերային խաղա-  
լիք — ուղկաններով:

Ցամաքային ընդհարումները շատ գրավիչ  
էլին թվում: Այնտեղ հարկավոր է լինում վազել,  
պահվել, խորամանկութուն անել, առհասարակ  
գործել: ալինչ նավի վրա, կովի ժամանակ,  
կանգնիր սպասիր՝ թե թշնամու մարտկոցը  
կըլխկացնի թե՛ չի շրխկացնի քո «պահածուի»  
բանկային»:

Գուշչինն ամբողջ ուրը պաշտպանվում էր  
հյուսիսից նեղող սպիտակ զինվորներից: Յրաից  
մատներն իրար չէլին գալիս: Յերբեմն անհա-  
րին էր լինում հրահանն իջեցնել: Գնդակները  
մլավում էլին սոճիների արանքին և չփչիոցով  
ընկնում թաց ձյունի մեջ:

Մարտիկներից վոմանք պաքսիմատ էլին ծա-  
մում, բայց մեծամասնութունը պաքսիմատ  
չունեն: Ծարավ էլին: Գուշչինը ձյուն էր թափ  
տալիս լեռենու ճուղերից և կուլ տալիս: Ձյու-  
նից աղ դրած վարունգի թույլ հոտ էր գալիս:

Յերեկոյան դեմ սպիտակների զրահապատ  
գնացքը դուրս թռավ անտառից և խիտ համա-  
զարկով գնդակոծեց զորամասը: Մարտիկներն  
ընկնում էլին ձյունի մեջ, հայոցելով փչում



եյին կարմրած մատներին, գծվարութեամբ հետ եյին քաշում փակաղակաները: Վոմանք հենց այնպես ել մնում եյին պառկած ձյունի վրա և չէր կարելի հասկանալ՝ սպանված են նրանք, թէ քնել են անչափ հոգնածութիւնից:

Գիշերվա դեմ, զրահապատ գնացքի պաշտպանութեան տակ, հարավից մոտեցան նոր սպիտակ զորամասեր: Դեսանտին ճգմում եյին մամլակի մեջ: Նա դանդաղ հետ եր գնում դեպի լիճը:

Ճանապարհին ծանծաղուտով անցան սառը, մուգ գետը: Մարտիկներից մեկը ջուրն ընկավ, և, բռնված ձկան պես, սկսեց թալրաւ: Գուշինը հասկացավ, վոր մարտիկը կորած է: Նրան վերցնել չկարողացան: Սպիտակները ավտոմատներից հաճախակի կրակ եյին տեղում գետի վրա:

Լսվում եր թէ ինչպես հեռվում, լճի վրա վորոտում եր նավատորմիղը, ոմբակոծելով Մեդ-վեթիլ սարը:

Յամաքային մարտերին անսովոր Գուշինը մի բան եր տեսնում. դեսանտին սեղմում են ափին, լերկաթգիծն անմլասս է, սպիտակները ճնշում են լերկու կողմից: Մի խոսքով — «խողովակ»: Սպիտակների թիկունքում դեսանտի առաջացրած խուճապի մասին Գուշինը չգիտեր:

Այն մասին, վոր սպիտակները, դեսանտը շփոթեցնելու համար, հարկադրված եյին ճակատից մտներ վերցնել — նա նույնպես չգիտեր:

Առաջին որվա լերեկոյան Գուշինը կատարեց լերկորդ դասալքութիւնը: Նա զորամասից անհայտացավ, տանելով հետը չորս ձեռնանուռնակ: Գիշերը նա անցավ անտառով մինչև լերկաթգծի պաստառը, և պառկեց թփերի մեջ, փախչա կամուրջի մոտ:

Նա պառկած եր և ահաջ եր դնում, ու պարզ գիտեր թէ՛ ինչ պիտի անի:

Կես գիշերի մոտ նա նիրհեց: Յերագում տեսավ հայրենի Բելոգերսկը, աշունը, անձրևը, ծխական դպրոցը և տեր Իոսաֆին, վոր նրան գրագիտութիւն եր սովորեցնում հին ուխտի քրքրված դասագրքով: Տերտերը նստած եր դասարանում խոր կրկնակոշիկները հագին, դռան տակից խոնավ ցուրտ եր փչում:

Գուշինն արթնացավ և թքեց, — ա՛յ քեզ, ցանցառ լերագ:

Անձրեվախառն թանձր ձյուն եր գալիս: Հանդարտ դուգում եյին ռելսերը: Գուշինը ձայնից վորոշեց, վոր զրահապատ գնացք է գալիս: Նա սողալով մոտեցավ կամուրջին: Շուրջը վոշվոք



չկար: Անտառից զգուշութեամբ, կարծես հետ  
ընկրկելով, դուրս չեկալ առաջին գրահապատ  
վագոներ:

— Ա՛խ, մի թեյ լիներ, — հառաչեց Գուշչինը,  
տեղահան արավ ողակը նռնակից և շալտեց կա-  
մուրջին:

Կամուրջը նստեց միայն յերրորդ պայթյու-  
նից հետո: Ողակը տեղահան անելով չորրորդ նռ-  
նակից, Գուշչինը դանդաղեց. նռնակը պայթեց  
ուղի մեջ: Գուշչինը նստեց գետնին, բերանում  
զգաց տաք հեղուկ և կուլ տվեց նրան: Նա աղի  
յեր. նրանից սիրտը խառնեց:

— Ա՛յ քեզ թեյ, — շնչաց նա շփոթված,  
թեքեց ձյան վրա ատամների արյունոտ բրթուշը  
և պառկեց լիրի վրա:

Գնացքը առաջ եր վազում յերկարածիդ դղր-  
դոցով:

Գուշչինը նորից նիրհեց, տեսավ Տրեներին,  
վոր անտառի միջով գալիս եր նրա մոտ. ձայն  
տվեց նրան. «Հոգիս ալըվում ե, Եղուարդ Պետ-  
րովիչ», բայց Տրեները չեր լսում: Նա գնում  
եր և յերգում իր սիրած յերգը.

Ո՞վ ես, յերգչուհի, յես չգիտեմ,  
Բայց գետի վրա հնչուն յերգերին

Յես հաճախ հեռվից ականջ եմ դնում,  
Իմ աղքատիկ, խղճուկ նավակում:

Գուշչինը հառաչեց և փակեց աչքերը:

Ջրահապատ գնացքը զրնգոցով և վորոտով  
ընկնում եր գառիվայրով, փորում եր հողը և  
ցնցվում եր կիսամեռ ոձի պես: Արշալուսի  
կապտավուն լուսի մեջ նա սարսափելի յեր և  
զզվելի:

Գուշչինը կուշ յեկած՝ պառկած եր կողքի  
վրա: Թվում եր թե լիրի վրա յերելսա յե քնած:  
Նրա գլխի շուրջը ձյունը դարձավ վարդագույն  
ու կեղտոտ:

— Թող այդպես լինի, խոսենք հերոսությու-  
նից, — համաձայնվեց Սարվինգը, — իհարկե, մշու-  
շապատ հասկացողութուն ե: Որինակ՝ ձեր պղու-  
կավոր հրետավորը, յերք զենիթային հրանոթը  
փշացավ, անգլիական ողաշույին բռունցքով եր  
սպառնում: Ողաշուն նրա վրա ումբ կաթացրեց  
և թեվը պոկեց: Այս հարցը դնում եմ քննարկ-  
ման: Ա՛յ, սատանա, վոնց ե քերում:

Նավատորմիդը սառույցները ճեղքում, անց-  
նում եր դեպի Պետրոգավոդսկ: Ամառային ար-  
շավը վերջացավ: Յերկաթե կորպուսների սա-  
ռույցներին քավելուց տախտակամածների վրա



«նգստոց եր տիրում: Սև մառախուղը, վաթ ասո-  
ռւ» անունն եր կրում, փռված եր հորիզոնում:

— Հերոս գտա՞ք, — բարկացավ Մարտաշ-  
նենը, — լեթե նրա ձեռքը չպոկվեր, լեւ նրան  
կկալանավորեցի: Նա թնդանոթը պիտի ուղղեր,  
և վոչ թե՝ բոռնեցքները թափահարեր:

— Դե, լավ — վերցնենք մի ուրիշ դեպք  
նույն այդ հրետավորից: Վիզլիցի տակ նա մա-  
յում եր վախից, բայց ճակատամարտի ժամա-  
նակ թշնամու մարտկոցներ տապալեց: Սրան  
ինչ կասեք:

— Այդ հերոսութունն է, — համաձայնվեց  
Մարտաշենը:

— Հերոսութուն, հերոսութուն, — ծաղրով  
կրկնեց Տրեները: Մեծագույն հերոսութունն  
այն չե, վոր գլուխդ՝ դեմ անես պատահական  
գնդակի, այլ այն է, վոր հասկանաս կատարվող  
դեպքերի վսեմութունը, և հավատաս հաղթա-  
նակին: Ազդանշանորդ Գուշչինն ապրում եր  
հերոսի պես, բայց նրա մահը լեւ հերոսական  
չեմ համարում, թեև դուք հենց այդ ել պնդում  
եք: Թույլ տվեք, թողեք վերջացնեմ: Գուշչինը  
հերոսի պես եր ապրում. ինչո՞ւ: Միանգամայն  
պարզ է, վորովհետև քարթու հացի կլեպի հետեին,

տիֆի հետեին, ծակոտկեն հրետանավակներին,  
և հարկադրված դաժանությունների հետեին,  
նա տեսնում եր վերջնական նպատակ: Սա հը-  
րաշալի լեր, և, հավատացե՛ք ինձ, Գուշչինը վոչ  
մի բռպե կասկած չուներ այդ մասին:

— «Մշուշապատ է, մշուշապատ է, ինչպես  
շուրջը ամեն ինչ մշուշապատ է», — խզված  
ձայնով լերգեց Սարվինգը:

— Քեզ համար ամեն ինչ մշուշապատ է,  
Տուվոյի թմբկահար, մինչև անգամ բազմապատ-  
կության աղյուսակը:

— Դուք համարում եք, վոր Գուշչինն ան-  
մրտորեն վոչնչացավ, — հարցրեց Մարտաշենը:

— Այո, մեր ժամանակին մահը պիտի լինի  
նպատակահարմար, ինչպես և ամեն մի մարդ-  
կային գործողութուն: Պետք է մեռնել այն ժա-  
մանակ, լերբ այդ հարկավոր է, և լերբ այդ  
տալիս է մեծագույն, լեթե կամենում եք, գործ-  
նական եֆեկտ: Գուշչինը մեռավ, վորպես  
խանդավառ բանաստեղծ բարիկադի վրա: Նա  
խրավունք չուներ թողնելու նավը:

Մարտաշենը կշտամբանքով պտտեց գլուխը:  
Տրեները բորբոքվեց:

— Հերոսության մեջ պետք է լինի խելք և



ճիշտ հաշիվ: Այլապես նա անիմաստ է: Հասկացմբ: Հեղափոխութիւնը խաչակրաց արշավանք չէ, յերբ ասպետները մեռնում ելին՝ Յերուսաղեմի հողը համբուրելու համար: Գեղեցիկ ժեստերը աչտմ հարկավոր չեն:

— Եհ, յեթե դուք զրահապատ գնացքի պալթեցումը համարում եք գեղեցիկ ժեստ... — փրնթփրնթաց Սարվինգը: — Այդ արդեն չափից դուրս է:

Տրեհները տաքանալով, վրա տվեց մի շարք անհեթեթութիւններ և, դուռը շրխկացնելով, դուրս յեկավ տախտակամած:

Նա վիճել չեր կարողանում:

Տաք վեճի ժամանակ նա հաճախ աչն չեր ասում, ինչ մտածում եր, հետո գլխի յեր ընկնում, և իրեն հիմար եր անվանում: Այսպես եր և աչտմ: Գուշչինի մահը ցնցել եր նրան: Նա հրաշալի տեսնում եր նրա վսեմութիւնը:

«Խնչը կարող եր մարդկանց հարկադրել թեթեւ սրտով նետվել կովի», հարցնում եր նա իրեն:

Շատ բան: Սկսած գաղափարից, վոր մարդուն ցնցում է մինչև վերջին ներվալին թելերը, և վերջացրած ահա այսպիսի մահով, վորով մեռավ Գուշչինը:

Տրեհներն անցավ բաքի վրա: Սառը մշուշը վրա յեր գալիս թանձր շերտերով, և նրա մեջ ընդհատումներով զրնգում ելին ժամասրվակները: Ժամասրվակների զրնգոցը Տրեհների մեջ առաջացնում եր բազմաթիվ հիշողութիւններ: Ամբողջ կյանքն անցել է այդ զրնգոցի տակ, միշտ միատեսակ և միշտ մի քիչ տխուր:

— Կյանք չէ, այլ մի ամբողջ պատմութիւն աշխարհագրութեան հետ միասին, — աս, դրա համար շնորհակալ եմ:

Նա շնորհակալութիւն եր հայտնում, հայտնի չէ ում, նրա համար, վոր վիճակվել է ծնվել այս վեհ և անեղ դարաշրջանում, յսել համաշխարհային նավահանգիստների դղրդոցը, ճակատամարտերի վորտը, տեսնել Միսսուրունգիի ժանգոտ ավերը, վորտեղ մեռավ Բայրոնը, և տատապեղափշով ծածկված Բելոգերսկը, վորտեղ ծնվել է նավաստի Ֆեոդոր Գուշչինը, կարգալ խելացի գրքեր և մարտնչել հեղափոխութեան համար:

— Ազնիվ խոսք, լավ է ասելը, — ասաց Տրեհները Սարվինգին, վոր նրա հետեից դուրս յեկավ տախտակամած: — Յես ինչ վոր գլխիցս դուրս տվի այնտեղ:



Գուռ ուշադրութիւնն մի դարձրու։ Յեթե գուռ Գուռ-  
չինի պես մեռնես, չես կսկսեմ քեզ հարգել։

— Գուռ ինձ կենդանի հարգիր, — հրհռաց Սար-  
վինգը։ Խարխալածով վռնկա կոճակները ճոճ-  
վում ելին նրա շինելի վրա, և գողգողում ելին  
ծիծաղից։

Պահպանական նավից հասավ շոգեշշակի խուլ  
լերգեցողութիւնը։ Հեռվում լերեաց Պետրոզա-  
վոզսկը։ Իրիկունն իջնում էր, բայց քաղաքում  
լույս չկար — ալնտեղ սպասում ելին թշնամու  
ինքնաթիռների հարձակման։ Միայն Ոսկեզանի  
գործարանի վրա մռայլ լույս էր տալիս հա-  
լոցքի վառարանների հրացուքը։

\*  
\* \*

Մեղվեժի սարի դեսանտից հետո, շուտով  
հյուսիսային ռազմաճակատը պատուկեց, սպի-  
տակներն անկարգ հետ քաշվեցին դեպի Եփր-  
ատ։

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան



NL0977518



73 ԳԻՆԸ 1 ՌՈՒՑ. ԱՅԼ. 1935

551

~~1-2 ԱՅԼ. 1935~~

1  
3526

